BnF
gallica BIBLIOTHÈQUE NUMÉRIQUE

Tosneal çagik ew pandowxtn

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Felekian, Simon (1835-1904). Tosneal çagik ew pandowxtn. 1884.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ԹՈՇՆԵԱԼ ԾԱՂԻԿ

ԵՒ

ՊԱՆԴՈՒԽՏ

ԵՐԿՆԵՑ ԵՒ ԾՆԱՒ

ՍԻՄՈՆ Հ. Մ. ՁԵԼԷԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Պուլնուգճի Խան

1884

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

ԹՈՇՆԵԱԼ ԾԱՂԻԿ

ԵՒ

ՊԱՏԱՊՈՒՀԱՏԵՆ

Գրադարան
Հայոց Պատմության
Ինստիտուտ

Լոս 8 -

414 7462

ԹՈՇՆԵԱԼ ԾԱՂԻԿ

ԵՒ

ՓԱՆԴՈՒԽՏՆ

ԵՐԿՆԵՑ ԵՒ ԾՆԱՒ

ՍԻՄՈՆ Հ. Մ. ՑԵԼԻԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Պուլնուզքի խան
1884

D4 7ae
2008-155255



ՆՈՒԷՐ
ՅԻՇԱՏԱԿԻ

Առ վաղամեռիկն երիտասարդ ազգիւ՝ Նշանիկ՝
սիրասուն որդեակ Բինկեանցի Մեծ. Օհաննէս
Էֆէնտիի Շահեանց

Ո՛վ սիրուն որդեակ՝
Սիրտ զարմին Շահեանց
Զայս քեզ յիշատակ
Զոնեմք անմոռաց։

Այս գուրթն է քո հօր,
Որ առ քեզ թռչի,
Այս գորով քո մօր,
Շիրմաւորդ փարի։

Եւ առաւօտեան
Աչկունք ցօղաբեր՝
Որ քո հող թանան,
Ան Սէրն է քո քեռ։

Զայն մի յուսալիք՝
Որ խնդրէ ղքեզ,
Կնոջդ են լալիք
Սրտիւ վշտակէզ։

Հայր Մայր Քոյր, ու Կին
Ամս չորսն ալ անքուն
Ասա լան վշտագին
Զանուն քո սիրուն։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գրքոյկս՝ որ կը պարունակէ բանաստեղծական այլ եւ այլ առարկաներ, գրաբառ՝ աշխարհաբառ՝ եւ մերթ յերկոցունց խառն լեզուաւ կը ներկայանայ իւր գրասէր ընթերցողաց, քաջալոյս լինելով թէ՝ պիտի բաղդաւորի վայելել գլխաւորապէս պատուարժան Հայ գրագիտաց սիրալիր համակրանքն, եւ ձեռընհաս ազգայնոց ազգօգուտ աջակցութիւնն. զի առանց այս երկոցուն անհնար է ումեք գրական տաժանելի ուղին անվտանգ ընթանալ, եւ շարունակել իւր գործաւորութիւնն ընկերական ազգի յառաջդիմութեան կենսական շինուածոյն։

Գ. Տ. Ֆրանկեան

ԹՈՇԵՆԻ ԾԱՂԿԻԿ

ՄԵԾ ԵՍ ԴՈՒ ՏԷՐ, ԵՒ ԱՌՆԵՍ ՍՔԱՆՉԵԼԻՍ, ԵՒ ԴՈՒ ՄԻԱՅՆ ԵՍ ԱՍՏՈՒԱԾ

ՄԵԾ ԵՍ ԴՈՒ ՏԷՐ,
Մեծ քան զաղջոյն տիեզերը.
Երկինք ղՔէն լասի, երկիր կրկնէ զայն,
Հաստատութիւնք քո զօրութեան են թարգման.
Կամիս, և բնաւք շարժին, այլ ոչ ըստ սահման,
Արեւն յակնարկ քոյին և եթ ապայ շրջան.
— Տէր խօսեցաւ — ասէ լուսնակ — և գնամ
Դարուց ի դարս, աւուրց յաւուրս, ժամ ի ժամ. —
Եւ աստեղաց ազգ յոյլ 'ի յոյլ գան 'ի բան,
Թ'Աստուած Յեսուայ մեղ կախ շողալ ետ հրաման,
Այսպիկ քո են համայն:

Մեծ ես դու Տէր,
Մեծ, զի ծնար զտիեզերը.
Հանայնք 'ի քէն, և դու նոյն ինքն յինքեան
Էիր, և ես, և ունիս գոլ անվախճան.

Զի ոչ յառաջ էր քան զքեզ յարակայ.
Ոչ ոչ բնաւ, որ 'ի սկզբան էր, և կայ.
Մի ես թէպէտ, այլ բովանդակ ամենայն,
Եւ ամենայն դու նոյն ինքն ես անսահման.
Ժամանակայն յաւիտենից անհուն շարք
Գոյին և եթէ մէն մի քայլից են անուանք.
Եւ հազար ամք որպէս մի օր երեկին,
Անյնպէս իսկ են յամենահաս աչս քոյին.
Զէակս յոչէն եթէ ոչ ած, բեր 'ի կեան,
Այն դու ես Տէ՛ր, որ Էն Աստուած յաւիտեան,
Այս քո անուն մեծութեան:

Մեծ ես դու Տէ՛ր,
Քեզ կայ վկայ տիեզեր.
Հողմն արձակեալ շնչէ, մնչէ երկիւղած,
Ծաղկունք 'ի բան եկեալ՝ խօսին դեռնամած.
Վառեալն ի թառ, սարեալն ի սար, գառն ի վայր
Միահաճուռ երգեն՝ դեղոյդ սիրահար.
Ծառք շշնչեն դալարագեղ 'ի սաղարթ,
Քառահոլով տան եղանակք արձագանք,
Թէ—արարիչ ես դու անթիւ աշխարհաց,
Եւ յար ԱՌՆԵՍ ՍՔԱՆՉԵԼԻՍ վեհապանծ.
Միակ աղբիւրդ հրաշալեաց:—

Մեծ ես դու Տէ՛ր,
Քեզ ծունըր տայ տիեզեր.
Եւ ծովն 'ի վեր կանխէ ալեօք մեծաձայն,
Եւ մէն մ'ալիք դան 'ի հանդէս օրհնութեան.

Ռինդք ընդոստ ջուրց ծուփ 'ի ծուփ փրփրագեղ,
Հռչակ կարդան մեծի անուան քում ահեղ.
Եւ խորք խորոց շարժին 'ի ժամ պաշտաման
Անպարագիր սքանչելեացդ 'ի խորան,
Զոր արարեր հրաշագան։

Եղանակաց թռչին առ քեզ ձայնք յոլով,
Գիշերն ցօղով պաշտէ, և ամ ի ամ լուսով
Զքեզ, որ Տէրըդ ես լուսոյ խաւարին,
Տէր՝ որ տեսլիք բնաւք առ քեզ անկանին։
Եւ մինչ ձմեռն ամռի 'ի աշխարհ սառնապատ,
Ընդ շէնս, աւերս, ընդ բոլանդակ անապատ,
Գան շանթընկեց վայրակ՝ կայծակ սայրասուր,
Գոռան, դոչեն, ասեն թէ—Տեառն եմք սուր.
Ի Հիւսիսոյ վարեալ մլիմք 'ի Հարաւ,
Արեւելից ընդ Արեւմուտս ամբաւ։ —
Եւ մինչ դարուն յառնէ ծաղկօք գոյն զգոյն,
Ասէ, —կեանք եմ ես 'ի կենաց դերագոյն.
Ոգի շնչեմ նիւթոյ, ոգի առնուն քիւրք,
Ոգի առնուն լերինք, և դաշտք, և հանուրք.—
Ի չորս ծագաց այսպէս կրկնեն արձագանք,
Թէ—որ մեզ կեանքս ետ, նոյն ինքն է կեանք.—
Արարածոց այս են ձայնք։

Մեծ ես դու Տէ՛ր,
Եւ քոյ է այս տիեզեր.
Մարդն հողածին ձգեալ զձեռս ընդ այեր՝
Շուրթն 'ի Սաղմոս, կայ անմռունչ աղօթիկեր.

Եւ ճանաչէ, և հաւատայ խօսողաւն,
Թէ էն, և չէն, և որ եկոց են համայն,
Ամենեքին քո պատմութիւնք են վրաց,
ԵՒ ԴՈՒ ՄԻԱՅՆ ԵՍ ԱՍՏՈՒԱԾ։

ՅԻՇԱՏԱԿ

Ըսէ՛ք, ո՞վ ժողվեց զարդերը դաշտին.
Ո՞վ վերցուց կանաչ քօղը անտառին.
Հովին դեղեցիկ ո՞ւր է զարդարանք,
Երո՞ւմ չլսուիր թռչնոյն դեղդեղանք.
Ո՞հ ուր որ հայիս, վոսուած են յաւեր,
Ամայի՛ երկիր, ամայի՛ եթեր.
Ամենք երեւոյթ, ամենքն ալ պատրանք,
Զոր կեանք կանուանեն, նոյն ինքն է խաբկանք.
Սառէրի հանգոյն կուգան, ու կանցնին,
Զերեւին նոքա, որք յառաջ էին.
Այսօրը վաղուին, ու վաղն անցելոյն
Եթէ հարցանես, կուրանայ խելքոյն.
Այլ ի՞նչ է ծաղկին բուրումն և գոյն,
Որով կը պարծի ամառն ու գարուն.
Մարդն է՞ր ըզձիւ կը հայի առ այն,
Սիրտն ընդ նմին խօսի ըզձաձայն.
Զի երբոր աշնան շնչէ ցուրտ քամի,
Խամրի գունաթափ, յերկիր տարածի.

Հարցո՛ւր, — այն սիրուն ո՞ւր են ծաղիկներ.—
Կըսեն, — չորացան, խոպան են դաշտեր։ —
Արշալոյսն ի՞նչ է, որ ներկէ կարմիր
Քնքուշ մատներով զայրն վարդաձիր.
Եւ երկիր նովաւ զիւր կոզն յարեւ կոյս
Առուան կանուխ կը շրջէ 'ի լոյս.
Եւ կառնու սկիզբն օր տալ զշրջան,
Արարածք շարժին 'ի կեանս անսահման.
Ապա ժամք ժամուց զհետ որընթաց
Զօրն յերեկոյն ծոց կը վարեն անդարձ.
Խնդրէ՛, տե՛ս, ո՞ւր է այն աչաց ցոլմունք,
Որ յԱրեւելից վազէր յԱրեւմուտք.
Ո՞ւր այն մեծաձայն աւուր տուր և առ,
Որ լեռը զողջոյն աշխարհ լայնատարը.
—Անցին՝— կը դոչեն համայնք,
—Այլ ոչ եւս է օր, ոչ այլ եւս է կեանք։ —
Զեմ լսեր, լռեց, դադրեց առուան
Արտախօսիկ երդ պանդուխտ Ծիծեռան,
Որ դաշտէ 'ի դաշտ, անտառէ յանտառ,
Եւ վայրէ 'ի վայր արձագանք կուտար.
Այլ հազիւ աշխարհ լսեց նորա ձայն,
Զայն անհետ ըրին ձեռքերը աշնան։
Եւ ո՞ւր հեղասահ թեւ հողմոյն թեւթեւ
Գետակին վրան, ու դաշտին վերեւ.
Խաղալով ծաղկին, 'ւ աչեաց հետ ապատ,
Զափեց, ու անցաւ ապատն անապատ.

Եւ լռեց խակոյն, լուռ է և հովիտ,
Լուռ մայրեաց սոսին, 'ւ անտառ խիտ առ խիտ։
Ո՛վ դու բարեբեր երկիր արդաւանդ՝
Որ դեղեցկագին ելը բանաս զվարդ,
Ասէ՛ ինձ, ուստի՞ փչեց դառնաշունչ
Քամին, և զվարդ խամրեց անշշունչ.
Որ սեւ հողերուն վրայ տարածուած,
Դալկացան փափուկ տերեւք ցօղաբարձ,
Զոր այժմիկ սոխակ խնդրէ ընդունայն,
Զի վարդէց օրեր եկան, ու անցան։
Դարձէ՛ք, հայեցէ՛ք, տեսէ՛ք կերեւի՞,
Կապոյտ աշխարհին ասուեղց թագուհի,
Որ պահ մը յառաջ շիրմաց մթապատ
Կերթար այցելու նաժշտուվքն ազատ.
Ո՞ւր են, չերեւին երեսք իւր վառ վառ,
Ամ այրին ու որք կային յուսատար.
Գնաց, այլ չեկաւ. իւր երթն է անդարձ,
Մեր օրուան քրոջ մի շունչն էր կենաց,
Որ երբ ներշնչեց, սկիզբն առաւ նա,
Երբ արտաշնչեց, վերջացաւ ահա։
Ոչ ոք չը լսեր ծովին շառաչիւն,
Որ սաստիկ ծեծէր զեզերս իւր անհուն.
Կատաղի ալիք, անզուսպ ովկիան
Կարծես թէ հանգչած են քնով մահուան։
Եւ դու ո՞ւր փախչիս հովիւ արտալած,
Հոտդ ցիր ու ցան 'ի դաշտին թողած.
Դարձի՛ր, այլ չկայ այն, զոր անդ տեսեր,

Դարձի՛ր, այլ չունի դաշտը վտանգներ.
Քանզի մունչիւն դադրեց առիւծին,
Զայն տարաւ, յանձնեց մահը սեւ հողին։
Խնդրեցէ՛ք, գտէ՛ք զայն մանկիկ մատաղ,
Ո՞ր շրթունքն 'ի տաղ, և սիրան էր 'ի խաղ.
ՅԱռաւօտ գարնան սիրուն և անմեղ
Վարդ մի էր ծաղկանց մէջ բացուած շքեղ.
Այլ քիչ մը յետոյ դէմքն փոխուեցան,
Եռանգ և աշխոյժ հետ դհետ անցան.
Վառվռուն հասակ առաւ իւր դադար,
Զէ այն գեղանի մանկիկ սիրավառ.
Թէ երբ հարցանես, — ի՞նչ եղար մա՛նկիկ,
Ո՞ւր գայլն կենացդ օրեր գեղեցիկ. —
Իսկոյն զայս ախուր պատասխան կուտայ,
Կըսէ թէ, — մանուկ էի, ծերացայ. —
Եւ ո՞ւր ծերունին այն ալեծալիկ,
Ո՞ւր պատկառելի դէմքն սիրելիք.
Դեռ երեկ կայր յեց 'ի ցուպ իւր նկուն,
Ոչ եւս է այսօր, մեռա՛ւ ընդ այդուն,
Մեռան, որք 'ի կեանս, մեռա՛ն, որք 'ի գոյ,
Երա՛զք վաղանցիկ, երա՛զք են անգոյ.
Սակաւիկ մ'յառաջ համայնք 'ի կենդան,
Սակաւիկ մ'յետոյ համայնք վերջացան,
Որ էրն, այլ չէ. որ եկն, էանց.
Եւ մահկանացուք հարցանեն միմեանց,
Թէ, — Զ՞ինչ է ուրեմն կեանք, և սէր անյաղ, —
— Լոկ ոչնչութիւն, և լոկ յիշատակ։ —

ԶԻ՞ ԲԱՐԻ, ԶԻ՞ ՎԱՅԵԼՈՒՉ
ՅՈՐԺԱՄ ԲՆԱԿԻՆ ԵՂԲԱՐՔ ԻՄԻԱՍԻՆ

Ծաղն ու ծիծաղ ժպիտն ու խինդ
Խանդաղատեալ՝ դդուանս միմեանց
Փոխանակեն ըղձից 'ի թինդ,
Ի տան՝ յորում կան շարք եղբարց,
Եւ հարց ու մարց
Գերց սիրարծած։

Սէրն անդ ամպով դայ ձիւնագեղ,
Փափկիկ մատամբ իւր սիրունակ
Կենաց քնարն հարէ շքեղ,
Դաշնակաւոր լսին նուադք,
Հրճուին Մուսայք,
Ընդ այս երգանք։

Հրեշտակք տեսին զայս փառս երկրի,
Եւ մեծաձայն 'ի բան եկին,
«Թէ զի՞ վայել՝ և զի՞ բարի,
«Սոյն եղբարք 'ի միասին
«Կան, բնակին
«Են անմէկին։» (1)

---

(1) Տպագրական կարգալրութեան մէջ առթիւ առ հարկի կրճատեալ է այս ոտանաւորս։

ՔՈ Է ՏԻԽ, ԵՒ ՔՈ Է ԳԻՇԵՐ

Ժամ էր կենաց, ժամ էր լուսոյ,
Յոր յարուցեալ տեսի ես զոր.
Ուր տեսարան Սիրոյ Յուսոյ
Բանայր վսեմ, և փառաւոր։
Թեւ հոլաթեւ ածի յայնժամ
Հոգւովս 'ի վեր յաստեղատուն,
'և անտի դարձի դամ քան զդամ
Տիեզերաց 'ի տես ողջոյն։
Խորհուրդ խորոց, տեսիլ անծայր
Ձուշ և զուրուշ իմ գրաւէր,
Եւ հայէի մինչ անդադար
Յերկիր, 'ի ծով, և մերթ յերթեր,
Անդ անապատ մի ամայի
Ինձ յանդիման ել ընդարձակ,
Յոր երթէ ոք ուշիւ հայի,
Մահու պատկեր էր այն համակ,
Զի վազր առիւծ՝ վիշապ հուժկու,
Սոսկատեսիլ հզօր գազանք
Երեւեցան ինձ ահարկու։
Եւ զիս կալաւ անդէն զարմանք.
Թէ անդանօր ինչ չ'երեւի,
Ոչ բոյս, ոչ տունկ, ոչ ինչ 'ի կեր,
Եւ 'ի դաշտին չիք հովանի,

Եւ ոչ բնակ հանդստաբեր։
Անդ համայն մերկ. ամուլ համայն,
Դա հովանիս մի բոցալիր,
Ուր բարկ ճաճանչ արեգական
Կիզու զաւազն անպարագիր։
Այնց ձայն եւոու, թէ ի՞ւ ապրին,
Ուստի՞ անունդ դայ անապառ,
Որ յանկենդան անապատին
Ծնան, կացին դարուց 'ի դար։
Ապա յանտառ մի լայնադիր
Գտայ, յոր բոյնք անթիւ էին,
Ընդ տերեւովք կանաչածիր,
Ի շող արփոյն փողփողէին։
Ուր զով զեփիւռ մեղմով դնայր,
Զարթուցանել յանուշ քնոյն
Զազգի ազգի ճնճղուկս 'ի թառ
Զգել յօրհներդ առաւօտուն։
Յունկն իմ եհաս այնց երգոց ձայն,
Գան զմարդկան վեհ ալելուք,
Եւ խնդրեցի ինձ պատասխան,
Թէ ո՞յր քնար, կամ ո՞վ էք դուք։
Անտի 'ի ծայր դարձի լերին,
Տեսի հողմունքս թեւապար,
Որ մեծագոչ հնչմամբ ուժգին
Եկին, անցին աշխարհավար։
Զհետ ես բանս արձակեցի

Գիտել թէ, ո՞յր այն պեռութիւն,
Որ 'ի միոյ ծաղաց երկրի
Ի միւս ծաղ դնայ իսկոյն։

Յեռոյ եղի զոռն յիմ Մասիս,
Զոր ծածկէին թուխ ամպք սիւռ
Ուր շանթ՝ կայծակ վերայ գլխիս
Որոտընդոստ թափեցան բիւր։
Սարսափ առին երկրի հիմունք,
Եւ դողային, թէ ո՞յր բանակ
Թափէ դնտակս և աղեղունք,
Անդիմադիր, և անքանակ։

Ա՛լու եղեւ ինձ ձայն առուին
Ի ծաղկաւէտ դաշտաց միջի,
Որ 'ի խաղաղ պահ գիշերին
Յանհունութեան երգ թաւալի.
Անդ մօտ նմին եղէ մէնիկ,
Եւ քննութիւն արարի ես,
Եւ խօսեցայ, թէ այդ քաղցրիկ,
Եւ վսեմ ձայն ուստի՞ է քեզ։

Զու արահի պարտիզին մերձ,
Տեսի, պճնեալ էր պէս հարսին,
Եւ զարմացայ, թէ զայն հանդերձ
Ո՞ զգեցոյց դեղեցկադին։

Յեռոյ եկի 'ի հիւղ հովուին,
Զոր ձիւնաթոյր ներկէր արև,
Ուր կայտառէին յոյլ մի դառին

Ողեալ 'ի գոյն ճերմակ ու սեւ,
Կայր անդանօր Հովիւն խաղաղ
Յեոյ 'ի մարմանդ գեղաժպիտ,
Շուրթն 'ի սրինդ, մատունքն 'ի խաղ
Երգէր զՅուրն ականակիտ,
Որ 'ի ժայռից ձգեալ բարձանց
Շառաչաձայն հոսէր արագ,
Եւ զպատուս բուժել խաշանց
Ուրէք ուրէք գործէր լճակ.
Սռի դադար, և շրջեցան
Ուշք իմ 'ի Սուրբ հովուին տաղերգ,—
Որ 'ի տնէն այն փքաձայն
Դաշնակաւոր ելանէր երգ.
Ո՞հ ասացի, զի՞նչ խորհուրդ խոր,
Զի տիկմ'անշունչ խօսի շնչով,
Սյսչափ վսեմ, և կենաւոր,
Զդէ առ ինքն զէակս յոլով։
Հովիան եռեռս զիս անդ, իսկոյն
Բացաւ զիւր կող զարմանազան,
Յարեաւ անդէն շուշան սիրուն,
Հարց զողջունէս իմ քաղցրաձայն.
Ապուշ 'ի նա հարեալ կացի,
Եւ սիրոս յինէն թռեաւ 'ի վեր,
Ում' անհամբեր ես գոչեցի,
Թէ ինձ ասա՛, ո՞վ է քո տէր։
Սպա անտի մտի 'ի ծով

Անդնդախորք, և անյատակ,
Ուր լեռնաչափ միզմիով
Սլիք զալեօք ձգէր վտակ,
Բազմատեսակ լցեալ էին
Սրարածոյ ազգ ազգ անհուն,
Եւ վեր 'ի վայր անդ խուժէին,
Հարցի թէ, զի՞նչ է ձեր անուն։

Թողի զսիւ, և ընդ մթին
Երեկոյն դուռն անցի, ուր վառ
Արծաթածամն ճոճայր լուսին
Ընդ կամարօքն Աստուածափառ։
Ժամ էր լռին, ժամ էր խաղաղ,
Աստեղք 'ի լոյս ցոլանային,
Եւ զեփիւռին դայր թեւ 'ի խաղ
Զարտեւանամբ խուլ գիշերին։
Լուռ, այլ սակայն նուագք էին
Շողք եթերայց կապուտադեղ
Լուռ, այլ սակայն պերճ լսէին
Երկնահանդէս պարուց գեղգեղ.
Հոգիս յինէն ել, վերացաւ
Յանեզրական լիմն 'ի հանդէս,

Իմաստութեան անդ խոր բացաւ
Մեծ եւ վսեմ վայելչապէս։
Անդ էր հրաշքն, անդ մեծութիւն,
Անզրուական էին անդ փառք,
Անդ հոգածնին իմաստութիւն

Յիմարութեամբ կայր նշաւակ.
Ի բան եկի անդ երկիւղած
Յայնչափ անթիւ հրաշից 'ի մէջ,
Եւ ուղղեցի խսկոյն զայս հարց,
Թէ ո՞վ զձեզ վառեաց անշէջ.
Լռնջ 'ի վաստակ, զկայ առի,
Զի այլ և միտք իմ ոչ զօրէր,
Եւ չէր հնար զհրաշալի
Քննել զերկիր, քննել զեթեր.
Եւ զաչս իմ յիս ամփոփեցի,
Անդ մտախոհ կացի, և լուռ
Անդէն երկնից և աշխարհի
Լուայ զձայն միահամուռ.
Տեսի բնաւք 'ի բան եկին,
Եռուն անդէն ձայնք բիւր բիւրուց,
Եւ բիւրք զնոյն ձայն կրկնեցին
Առ այն, որ տէրն է եթ հանուրց
—Թէ որ 'ի գայ, որ ինչ 'ի կեան,
Եւ անհամար այս տիեզեր,
Աստուած իմ քո եմք ամենայն
Եւ քո է տիւ, քո է գիշեր։

ՔՆԱՐ ԵՒ ԱՅԳ

Օ՛ր, որ դեռ 'ի գիրկ հանգչիս Մորփէին,
Ողջոյն առուր յինէն մօրդ Արշալուսին.
Ասա՛, զիւր դարիկ՝ զԱյգն գեղանի
Հարս տայ սիրահար իմում քնարի.

Զի քնար եւ այգ
Են մի զոյգ նուագ,
Անահման վառայ
Էին յաւիտեանց։

Քնար վառակի շուրթն է խոխոջուն,
Թարգման աստեղայց զգիշերն ողջոյն.
Խօսի ընդ երկրի ձայնիւ երկնային,
Եւ զերկրի զձայն հանէ 'ի յերկին։
Քնարն է կենաց լեզու անուշակ,
Եւ սիրտ սոխակին, և վարդին հոգեակ,
Երգէ զդարնան Սէր, և դան համայն էք,
Լսել 'ի հաճոյս զիւր քաղցրաձայն երգ.
Բարւոյն գեղեցկին վառ խանդն է քնար,
Սուր թեւ 'ի թռիչ յաշխարհէ յաշխարհ,
Ի դաղտնեաց դաղտնիս, 'ի կենաց 'ի կեան
Գնայ, գրաւէ, շարժէ զամենայն։
Եւ ովկիանու ալիք բիւրաւոր
Այն ինչ հոգմուռոյց բարձրանան խոժոռ,
Եւ ահեղագոչ ընդհարին ժայռից,

Ա՛ընկրկին խրոխտ , փշրին փրփրալից ,
Ժողովին փութով , և առնուն դադար ,
Թէ Աստուածախօս ձայն տայցէ քնար։
Այն ինչ կատաղի գազանքն յանտառին
Սովեալ ոռնաձայն՝ յախտուն յարձակին
Անգութ՝ անողորմ պատառել անդէն
զՄարդ, կամ զանմեղ անասուն ամէն ,
Թէ տեսանիցեն զերեւս քնարին .
Իսկոյն թուլանան , իսկոյն լքանին ։
Եթէ Սաղայէլ բանայ զդժոխք ,
Երեք քորք անգութ՝ հեռ , վրէժ , և ոխք
Գան վնռել անմաշ հրով սոսկալի
Հանճար՝ և կորով , հասակ դեղանի ,
Թէ լսեն զանուշ նուագ քնարին
Նոյն ժամայն լքրեւ ջրով շիջանին ։
Այսպէս թէ յանդունդս ինչանէ քնար ,
Անդ խորք և խաւարք փայլին լուսավառ .
Թէ յերկինս 'ի յայց դնայ աստեղաց ,
Կազմեն լուսաւորք հանդէս վեհապանծ .
Ո՛հ , քանի՛ հրաշք , քանի ո՛հ գաղտնիք
Ընդ քնարն և այգ պահին սիրելիք ,
Յորոց բղխէ լիզձն զԱ՛իրոյ աղբիւր ,
Առ որ անկանին սիրտք և հոգիք բիւր .
Ոչ ոք է գիտակ , թէ զի՞նչ է որ էն ,
Ոչ ոք է անգէտ , թէ նոյն ինքն է Էն ։
Օրհ՛ , որ դեռ 'ի գիրկ հանդչիս Մորփէին ,

ՈգՀոյն տո՛ւր յինէն մօրդ Սրշալուսին .
Ասա՛, զիւր դատրիկ՝ զՍյդն գեղանի
Հարս տայ սիրահար իմում քնարի .

Զի քնար և այդ
Սիրոյ են նուագ
Սէր հոգի կենաց
Սէր ինքն է Աստուած :

ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա՛ արփին յայնգուն դուռս
Ոսկի կառօք գայ 'ի դուրս .
Յոյս սէր լծած իւր կառքին
Յամպոց միջոյ բոցածին ,
Բերեալ պարգեւ կեանս հազար
Տայ տիեզերց վեհափառ .
Քօղ՝ որ գիշերն էր թողած
Ի հիւղ հովուին մթամած ,
Ծածկէր յանուշ 'ի քնակ
Լեռ՝ ձոր ու դաշտ , ու ծմակ ,
Գայ զայն բառնայ , և ապիւռ
Սփռէ սաւան ձիւնաթոյր .
Անդ լայնադիրն ովկիան
Թարժի 'ի պահն յարութեան ,
Ելոյէ զաշխարհն 'ի հանդէս ,

Անվնք վէտ վէտ գան 'ի տես .
Անփունք լուսով են արթուն ,
Ի՞նչ տուր և առ զուարթուն ,
Յուզմունք ծփանք մանրագիլ
Մի զմիով գան 'ի գիլ ,
Լսէ՞ք ծովու զմեծապանծ ներդաշնակ
Վեհ քան զՈրփեան զնուագ .
Որ պերճախօս ձայնիւ պաշտէ զանսահման
զՄեծութիւն արարածոց պետութեան՝
Տեառն Աստուած , որ ինքն աղբիւր է կենաց ,
Նոյն ինքն Տէրն փառաց ։

Բիբք՝ որ խոնջեալ 'ի վաստակ ,
Կային 'ի նինջ անուշակ . ,
Տակաւ տակաւ բանան շուրջ
Հանէ բնութիւն զիւր շշունջ ։
Վտակք ջինջ դովագին
Դղջաձայն առուակին .
Մէն մի շարժից նոցա վանդ
Պաշտելութեանց են մաղթանք .
Հոլմունք հոլմոց տան զձայն ,
Թէ—այո Տեառն ամենայն—։
Իացա՞յք դուք զհոգեխօս ձայն վարդին ,
Թէ զ՞ինչ խօսի սոխակին ։

—Սէր՝ զոր—Ասէ , —'ի քեզ կրես դու անանց ,
—Ի գալ գարնան նորոգէ Տէրն տերանց ,

—Որ ինչ յաստեղս, որ ինչ յԵրկրի, որ ինչ աստ
Են Անեղին մերոյ փառաց—

Տեսէ՛ք, սա օր կենսաձիր,
Բաց են երկինք, ու երկիր.
Ընդ խորանաւ աստղալից
Խաղան հրաշք ընդ հրաշից.
Կենդանութեան ոգի բիւր
Բաշխի յաշխարհ ընդհանուր.
Նոր օր, նոր ժամ, նոր նեհ
Փոխանակի յամէն դէհ.
Հայի՞ք 'ի մարդքն երկիւղած ծնրադիր,
Ճակատ խոնարհ 'ի յերկիր,

Ի բարեպաշտ իւր սրտէն
Զերթ խնկոց բոյր ելանէն
Օրհներդ. պարկեշտ շրթամբ պաշտել զտուիչ
Այս մահացու կենաց մերոց նորոգիչ.
Թէ պարգեւեաց մեզ զայս նոր օր, նոր տարի,
Փա՛ռք Արարչին Անմահի։

Հրեշտակ և մարդ հաւասար
Առեալ կենաց զնեկտար,
Քամեն, և սիրտք ընդ այեր
Թեւքս առնուն վայր ու վեր.
Եւ խղճք յերկինս սլանան
Ի գեղեցիկն աննման.
Տարերք խառնեալ ընդ իրեար,

Մին առ միւս ձայնահար,
Տան աւետիս համայն էք,
Թէ նորոգի տիեզերք.
Հասարին յօնից 'ի շարժուած
Ծնելով բիւր արարած.
Գիտէ՞ք արդ. զի՞նչ ինչ յամենուստ լսին բանք
Ծագաց — 'ի ծագ արձագանք
Ասեն, — թ'օրհնեա՛լ, որ նոր տարի քեզ մեզ էն
Ի յանէից և յանէն։

ԿՍՏՍՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ

Խոր հեծեծանք զարեւելեան ունին սար,
Ողբս հարկանէ և արեւմուտք վշտահար.
Տակաւ տակաւ ցաւք պաշարեն զամենայն,
Հարաւ Հիւսիս համակ 'ի սուգ են համայն.
—Էանց գիշերն—ասեն—ո՛չ եկն այդաբեր,
Արշալուսոյն աչք 'ի լոյս ոչ բացան դեռ.
Տիւն 'ի կորուստ, լոյս ո՛չ ուրէք երեւի,
Խաւար զերկրաւ համատարած պարարի.
Զիք ինչ շարժմունք, ոչ բնաւին տուր և առ,
Ժամանակաց շրջանք առին զդադար.
Օրն 'ի գիշեր՝ ահա՛ խառնեալ գիշեր յօր,
Եփոթեցան համայն տարերք բիւրաւոր.

Եւ հարցանեն թէ — ո՞ր հզօրն, ո՞ր ազատ
Զայս աշխարհի զքայլ կացոյց մեծաստատ,
Իւր շարժմանէն անընդհատ։

Կորոյս զիւր ժամն հաւիկն այգուն հրաւիրակ,
Ոչ լու եղեւ առաւօտուն ներդաշնակ,
Օր չէր գիտակ թէ, զի՞ եղեւ զի արփին,
Դեռ ոչ յարեաւ 'ի խոր քնոյ գիշերին.
Եւ կամ զիա՞րդ դադար եւ իւր պաշտաման,
Կամ անսասան կարաց զանդարձ զհրաման
Այնր, որ էն ամենայն։

Ծովն զհողմիկ 'ի զուր խնդրէ զյուզիչ
Խաղաղական իւրոց ալեաց զարթուցիչ.
Եւ կայ մնայ արուսեկին գալատեան,
Որոյ հասեալ էին իւր կեանքն 'ի վախճան։
Կային անտառք, կային շշունչք 'ի հողմոց,
Ոչ ծառք 'ի շարժ գան, ոչ տերեւք են 'ի կոծ,
Կային համայնք, և առ դադար ընութիւն,
Ի տեսլենէս մնայր անգէտ մարդն 'ի քուն,
Էր, այլ սակայն թուէր թէ, չէր տիեզերք.
Չէր ո՛չ արեւ, և ոչ լուսին, և աստեղք.
Ինչքն յոչինչ փոխեալ գոգցեաւ ամենայն,
Մեռելութիւնք ընդ բովանդակս ընթացան,
Եւ ընդ բնաւս սփռեցան։

Խոր էր խորհուրդն, էր և անհաս տեսարան,
Եւ անցանէր անդր ըստ սահման գիտութեան.

Ոհ այս դադար համայն էից սոսկալի
Զարադուշակ լինչ էր ցաւոց լուսի·
Բանզի երկիւղ այն ահարկու լռութեան
Ունէր զոգիս, ունէր զշունչս ամենայն.
Համայնք 'ի դող, համայնք 'ի հող 'ի տարած,
Միահամուռ սիրեալ կային դեռնամած,
Պահ ոչ բազում էանց ընդ այս երեւոյթ,
Այլ պահ ախուր եկաց յաջորդ փոյթ 'ի փոյթ.
Եւ զի՞նչ, ահա՛ 'ի նմին իսկ 'ի պահուն
Կայաւ անդէն զերկիր սաստիկ դղրդիւն.
Զերթ զծփանս մրրկայոյզ լինչ ալեաց,
Տարուբերէր, շարժէր յուժգին 'ի ցնցմանց.
Եւ որոտմունք, թնդմունք ահեղ սոսկալիք
Լցին զերկիր, լցին զծով, և զերկինք.
Զի՞նչ պատահար, Ասուած իմ զի՞նչ պատուհաս
Ելից զաշխարհ դառըն մահուամբ վաղահաս.
Բաբէ՛, հարիլ միմեանց ճեպեն տիեզերք,
Վայրաթափալ հոսին լուսին և աստեղք
Ա՛հ զիրարիլ ահա առին սոսկաձայն,
Շառաչ ահեղ եռուն, համայնք փշրեցան.
Փոշի ընդ հունս խաղայ, զնայ բովանդակ,
Հանգոյն ծխոյ. որ բարդ 'ի բարդ տայ կուտակ
Զորք լեռնացան, լերինք դաշտաց հաւասար,
Ծովք 'ի ցամաք, ցամաքն 'ի ծով ընթանայր,
Ո՜հ, զի՞ է այս, զի բիւրք անկան 'ի վրդով,
Եւ շնչաւոր. ա՛նշունչ էակք 'ի խառով,

Հէք մարդն յայնժամահիւ ընդոստ յարեաւ վեր,
Այլ անադա՛ն, զի դա էր ժամ մահաբեր,
Ուստի խուսել հնար չէր։

Քանզի տարերք խառն ընդ իրեար,
Խառն են երկիր, և երկինք,
Մի զմիով յահեղ պայքար
Ոյոտ ընդոստ գան շանթինք.
Եւ ծով տեղի տայ խորութեան.
Անդր ըստ սահման խուժեն ջուրք,
Անիւք յալիս թագչիլ փութան,
Փախչիլ փախչին և հանուրք։
Ահա՛ խորշակն արձակեցաւ,
Ենչէ սաստիկ բոցագին,
Եւ բոյսք համայն, և տունկ ամբաւ
Խամրեալ 'ի հող անկանին։
Հա մերկացան դաշտք և հովիտ,
Եւ ձոր և խորք, և լերինք,
Զունին պարտէզք գեղոյ ժպիտ,
Մերկ են անտառք գեղեցիկ։
Դաշտն զծաղիկ խնդրէ 'ի զուր,
Ծառն զտերեւ իւր կանաչ,
Եւ ընդունայն աղբիւրք զջուր,
Խնդրէ վտակն զիւր կարկաչ։
Արագ արագ գնայ տագնապ
Ընդ ջուր, ցամաք, ընդ այր,
Սկիզբն առնու և հրատապ,

Բնաւք հալին 'ի ճենճեր։
Մահն անողոք գայ, 'ի փախուստ
Վարէ զոր ինչ ամենայն,
զՀետ պնդեալ ճէպէ կորուստ
Եւ կործանմունք բազմանան,
Եւ աւերմունք դիզանան։

Ահա՛ և վազքս տայ առիւծն շտապաւ,
Բայց ո՞ւր, ոչ եւս նմա անձաւ՝ քարանձաւ.
Եւ փուշ 'ի փուշ բաշք իւր ցցեալ վեր 'ի վեր,
Մռնչաձայն ընու զերկիր և զեթեր,
Ի սոսկմանէն կայ 'ի տագնապ յուսահատ,
Եւ մերթ զկուր խնդրէ, և մերթ զանապատ.
Եւ նուաղեալ մնայ յերկրի զերթ թռչուն,
Որ վիրաւոր զոգի վչէ դողդոջուն։
Անդուստ և վազրն զդութ խնդրէ յապաստան,
Գութ չի՛ք ուրէք, անդթութի՛ւն է համայն,
Հաւատարիմ և շունն զտէր իւր 'ի բաց
Թողեալ՝ ընդ այս, ընդ այն դնայ ճեպընթաց.
Աղերսարկու աչք իւր երկնից յանդիման։
Կողկողագին ոռնայ յողորմ ինչ 'ի ձայն։
Կով բառաչէ, խնդրէ զերինջ իւր մատաղ,
Նա 'ի տապոյ 'ի մէջ հովտին կայ նուաղ։
Խաչն զդառնուկ, որոնէ այծն զուլիկ,
Ուլն 'ի դաշտին կայ խանձռեալ զերթ ծաղիկ.
Վիշապն աստուստ թաւալագլոր գալարի,
Հարեալ ընդ խութ, լքեալ յերկիր կործանի,

Առջն դանդաղ ջհեռ գայլոյ սրընթաց
Վայրէ 'ի վայր , խորշէ 'ի խորշ գործէ դարձ.
Այլ ո՞ւր է վայր, այլ ո՞ւր է խորշ , ո՞ւր դադար.
Հուրն ընդ բնաւս էառ տեղալ անդադար .
Պատառին խորք , ահա՛ ժայթքեն ծծումբ հուր,
Վրէժ՝ և հեռ , ցասմունք 'ի դուրս վազեն սուր.
Եւ բռնկեալ ջերմի հնոց,
Վառիլ կալաւ հոգագունա ,
Ի վեր 'ի վայր ահեղ բոց
Ծուխ արձակէ գունդագունդ .
Զի՞նչ սոսկալի ժամ՝ ահաւոր ,
Զի՞նչ ապերքարշ տեսարան ,
Ո՛հ . ամենայն շունչ կենաւոր
Առին հեծել ողբաձայն .
Ճիչ յամենուստ , և աղաղակ
Եհան երկիր ցաւագին ,
Սգաց երկինք , լացին հրեշտակք ,
Գետք արտասուաց յորդեցին .
Ժողովեալով յոտս Անմահին
Յաղերս խնդրել դթութիւն ,
Բայց ոչ շինչաւ նոր Սոդոմին
Այս հուր, չեղեւ փրկութիւն ,
Զի այս վախճանն էր մարդոյն ։

Մթին էր պահն . ժամ էր պատժոյ վաղահաս ,
Երկնէր խաւար զանդարձական պատուհաս.
Երկնէր երկինք , երկնէր և հող, երկնէր ջուր ,

Երկունքն ահա դանծախական ծնան հուր.
Եւ մինչ առ այս անթիւ լալեաց ձայնք 'ի վեր
Աղիողորմ գոչմամբ յերկինս ելանէր,
—Եկն ահա՛ — որոտաց ձայն մի անդէն,
Եւ 'ի ձայնէն ցնցումն է առ, որ լինչ էն.
Բնաւք 'ի բան եկեալ՝ ահիւ ասացին,
—Եղիցի՛ն կամք քո, եղիցի՛ն, եղիցի՛ն —
Ապա—հարէ՛ք—դղրդեցաւ այլ պատգամ,
Ի պատգամէն թնթաց երկիր միւսանգամ.
—Հարե՛մք. հարե՛մք—ձայն կրկնեցան դող 'ի դող,
Նոյն ժամ հնչեաց 'ի չորս ծագաց սաստիկ փող.
Ա'ի մթութեան փայլատակեաց անդէն լաչ,
Եւ ցոլացան ճաճանչք լուսոյ ընդ առաջ.
Արեգական անդ անստուէր ճառագայթ
Լուսապայծառ ել յերեւան գեղազարդ.
Շոշափելի խաւարն եդարձ 'ի փախուստ.
Տեղի կալաւ կենսաբեր լոյսն յանմեռուստ.
Սերոբ Քերով կացին խսկոյն օրհնաբան,
Եւ—ովսաննա՛յ—գոչեցին բիւրք միաբան.
—Օրհնեա՛լ որ գասդ յանուն Տեն. օրհնեալ դու,
—Օրհնեալ յաղթողդ բոլորից ահարկու.
—Քո է երկինք, քո երկիր, քո են համայնք,
—Զյաղթութեան կնիքդ ունին յաւիտեանք,
—Երկինք աթոռ քո է, երկիր պատուանդան,
—Հոգիք ծառայք են քոյ կամացդ ամենայն. —

Սպա յաղթողն անդ զուարթնոց բանակաւ
Լուսացնցուղ ամպով եկեալ բաղմեցաւ.
Եւ լոյսն յայնժամ նորոգ շլյան առ կրկին
Նոր աւուր, նոր կենաց, և նոր աշխարհին.
Որ չէրն ինչ, եղեւ յոչինչ հուսկ ապա,
Եւ այն որ էրըն, է և այժմ, և յապայ.
Համայնք անցին, անանց յաղթողն միայն կաց,
Նոյն ինքն Աստուած, նոյն ինքն տէրըն կենաց
Ինքն յաւիտեան յաւիտեանց։

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Նոր երկիր, նոր էր երկին,
Լուսաւորք էին և նոր,
Զայն փողոյ Աստուածային
Լու եղեւ անդէն հզօր.
Եւ լուայ, այս էին ձայնք
—Դատեցին թող անաչառ
Եւ պատիւ բարին 'ի վարձք,
Եւ պատիժ առցէ թող չար—։
Եւ կրկին փողըն հնչեաց,
—Զգեցցի մարդ զիւր մարմին,

Ի չորից երկնից ծագաց
Գալ խմբել 'ի միասին — ։

ՅԱհաւոր ձայնէ անտի
Սերովբէք և Քերովբէք
Շուրջ եղեն կարգ ըստ կարգի
Առաքեալք և մարգարէք ։

Զուարթնոց խումբ փութացին ,
Եւ արքոց յոյլք դաս 'ի դաս ,
Պատգամաց անմահ բանին
Ակնկոր կացին յոպաս .

Որք 'ի հոգ թաղեալ կային,
Ընկղմեալ և անդր 'ի ծով ,
Որ հրով կիզեալ էին ,
Եւ հոսեալ աստուիկ հողմով ,

Կամ ժանտօք դաղանական
Անհամար ծախեալ մարմինք
Ի.քթթել մի ինչ ակն
Յերեւան եկին անթիւք .

Եւ կացին՝ բայց երկիւղած
Յանդիման ահեղ բեմին ,
Յոր բաղմէր Տէրն կենաց ,
Տէր մահու և աշխարհին ։

Ոչ էր անդ ողորմութիւն,
Գթութիւն չէր առընթեր ,
Անողոքին արդարութիւն

զԿշիռ դատին ունէր .
Ի շարժուած յօնից Վեհին
Սարսեցան հոգիք անդէն ,
Եւ Սերովբք յառաջ անցին
Վառ սրով ինչ հրեղէն .

Եւ յայնժամ Տէրն որոտաց ,
Թ՝—աշխատեա՛լք առ իս եկայք ,
Յի՞ի վառս անմահութեանց
Վայելել զկեանս անյաղ ։ —

Հրճուեցան յայնժամ հոգիք՝
Ժառանգորդք արքայութեան ,
Հրճուեցան երկիր ե՛երկինք
Ընդ վճիռն արդարութեան ,

Եւ յառաջ անց նոյն ժամայն
Գաբրիէլ հրեշտակապետ,
Ընդ նմին յառաջ մատեան
Զուարթնոց խումբ հետ զհետ .

Եւ զՍուրբ պսակ Խաչին
Ի գլուխ արդարոց եդ ,
Եւ բացան դրունք դրախտին՝
Այր կենաց երջանկաւէտ .

Եօթնարփեան լոյս ճաճանչեղ
Յօլացաւ երես նոցին ,
Ա.ռ սկիզբն օրհնից գեղգեղ
Ա.նդ բարւոյն և գեղեցկին .

Խառնեցան արդարքն յայն պահ
Յանմահից 'ի պար ղուարթ ,
Մահացուն եղեւ անմահ ,
Բարձրացա՛ւ անկեալն մարդ ։

Այլ պատգամ թռեաւ բոցով
Յանեղին շրթանց կրկին ,
Թ՝ , — այրեսցի անշէջ հրով
Մեղուցեալ մարդն հողածին ։—

Յայն ահեղ վճիռ և ձայն
Ահաբեկ եղեն բնաւք .
Ո՛վ արդար ժամ ցասուցման ,
Ո՛վ մեղաց դառն վճարք .

Ուստ՝ անդէն անդ սարսեցան
Մեղաւորք որպէս տերեւ ,
Որ յերիր կայ 'ի ծածան՝
Փոթորկին հարեալ 'ի թեւ .

Եւ բացաւ սանդարամէտ ,
Տանջանաց վայր սոսկալի ,
Ժողովեալ ուր վէտ 'ի վէտ
Խմբեցան ճիւաղք 'ի մի .

Եւ դժոխք ինդաց համայն ,
Այլ վերնոց դասք սուգ առին ,
Վառեցան , պատրաստեցան
Նոյն ժամայն բոցք դեհենին ,

Դա ցաւոց և հեծութեանց,

Դա ողբոց օր ահաբէկ ,
ՕՀ՝ կարիճ , և հուր անանց
Անդ լցան և բիւր աղէտք .

Եւ անդէն անդ սկսաւ
Սոսկալին այն մարդաշոհ ,
Ուր արտասր և ապաշաւ
Ոչ զօրել կարացին ո՛հ .

Զամենայն մեռեալ մարմին
Ո՛հ . կալաւ ամպոց հանգոյն
Մահաբոյր ծուխ ինչ մթին ,
Եւ խաւար էջ անդ անդ խակոյն ,

Եւ սեղի եւ լալ սաստիկ ,
Կրճատել և առամանց ,
Եւ էին յոյժ եղկելիք
Տեսարանքն տանջանաց .

Կորեա՛ւ մարդքն մեղաւոր
Յայն տանջանքս անվախճան ,
Եւ լցաւ այսպէս հղօր
Անմահին նախատահման ։

ԴԺՈԽՔ

Խուլ որոտմունք , խուլ դղրդիւն, ցնցմունք նոր,
Գնան ընդ դաշտ, ընդ սարս, ընդ ձորս ահաւոր-

Եւ կայծարձակ բոցք 'ի խորոց ժայթքեն սուր
Ընդ բարդ 'ի բարդ ծուխս թուխ 'ի թուխս մահա-
բոյր.

Եւ ծաւալեալ ընուն զհունս համօրէն,
զՀող, և զօդ, և զայն, յոր աչք և զօրէն.
Ցունչք և հոգիք կեանք ընդ նոքօք պաշարին,
Եւ սեւ 'ի սեւ գոյն առնու ծուխն 'ի ծվին.
Կապոյտ կամար մածեալ 'ի ծուխս, և 'ի ցօղ,
Թախիծ զերկրաւ պատէ, սահմանք են 'ի դող.

Եւ գարշահոտ ինչ ծծմբոյ և նաւթի
Յաչ և յահեակ, յառաչ և յեռ ծաւալի.
Զիք 'ի միջի, չիք բնաւ, չիք ինչ ուրէք,
Այլ 'ի խորոց դան աղեքարշ եղերերդ.

Եւ 'ի սարէ դնան 'ի սար հեծեծանք,
Սարսին լերինք, սարսին և ժայռքն համակ.
Եւ շառաչմամբ պայթին փշրին քարանձաւք,
Բաբէ՛ դոքա են կորստեան երկանց ցաւք,

Զոր ոչ լսել տանին էակք հողածին,
Ոչ հանդուրժեն և սուրբ հոգիք 'ի յերկին.
Զի՞նչ երեւոյթ սոսկատեսիլ, անբմբեր
Գայ անողորմ փոխել զերկիրս այս յաւէր.

Բաբէ զի՞ երդ դողայ հովիտն և անտառ
Ի մռնչմանց, որ անդ լսին անդադար.
Եւ զի՞նչ դոքա, զի՞նչ տեղի, զի՞նչ ժամանակ,
Քատնաբեր զի՞նչ պատահար է խառնակ.

Դա չէ գիշեր , զի յայդմ ոչ գոյ լուսին,
Դա չէ և օր , զի ոչինչ լոյս 'ի դմին ,
Զէ և երկինք, չունի ոչ ամպ, ոչ եթեր ,
Եւ ոչ երկիր , զի չունի ինչ կենաբեր .
Շոշափելի խաւար և եթ լի է անդ .
Տեսիլն ահեղ վայրն սոսկալի մանաւանդ .
Անդ ոխ , անդ քէն , և անդ վրէժ անողոք ,
Դա ահարկուն է դժոխք :

Ուր խորք անհուն , ահա յատակ անսահման ,
Բոցակրփուր դա ինքն հրոյ ովկեան ,
Եռայ , ղեռայ իբր 'ի հալոց զկապար ,
Վիժեալ ընդոստ 'ի դուրս շանթիս կայծահար .

Խարխուլ երկիր . շրջապատեալ կայ միակ
Յանծախական ինչ բոց , ա'ի ծուխ միայնակ .
Նոր էր տեսիլն , նոր արհաւիրք երկնահաս ,
Նոր զհանդէս մահու բանայր պատուհաս .
Եւ քսանքեր վինչ ժամք լռին , և խորին
Զանիծապարտ մարդոյն կորուստ երկնէին ,
'Հա, թափ 'ի յեշտ տուեալ, անցեալ ուժգնապէս
Ընդ թանձրամած ծալքս ամպոց դէզ'ի դէզ ,
Սուր ընդ առաջ , հուր զնովաւ բոցագոյն ,
Յայնժամ Սերովբն հեղձամղձուկ դայ իսկոյն,
Զանդարձ վճիռ բերեալ յերկնից դլխաբարձ
Զերթ զկայծակ , որ ընդ յեռ կոյս չունի դարձ,
Եւ դժոխոյ զկայ առեալ յանդիման՝
Զայն ընթեռնու 'ի մեծասաստ ինչ 'ի ձայն .

Անդնդային սարսի վիշապն անդ ահիւ,
Եւ 'ի ձայնէն դողայ երկիր իւր լրիւ.

Այս էր պատգամն.—բացցի—ասէ Տէրն. հզօր,
—Տանչանարան բացցի արանց մեղաւոր.

—Թող յառաջինն մատուսցին այն հոգիք,
—Յոյց 'ի ճակատ իմ սրբութեան կայր կնիք.

—Եւ յերկրորդին դիցին իշխանքն աշխարհի,
—Որք անիրաւ արեամբ առ իս եկին լի,

—Եւ պարտապանցքն՝ որոց տուաւ ընտանիք,

—Թող յերրորդումն վարեսցին դատալիք.

—Իսկ 'ի չորրորդն ամփոփեցէք զայնոսիկ,
—Որոց ոճիր ևս գործեալ սոսկալիք.

—Եւ զանձնասէր, և զյիմար զմոլին
—Ի հինգերորդն արկէք վեհ տաղնապին։—

Ասաց լուեաց պատգամախօսն դուժկան,
Եւ արհաւիրք զամենեքումբք պատեցան.
Անդ Սադայէլ՝ որ կայր 'ի լուր պատգամին,
Անձն 'ի դողդոջ քայլ փոխէր ոտն յոտին.
Երիցս յառաջ մատեաւ, երիցս ընկրկեալ
Հարաւ ուժգին անդ զգեստն 'ի թաւալ.
Լքեալ յուժոյ, անկեալ մնայր գետնամած,
Ժամէր, եւ եւս հրեշտակն անդէն, և ասայ.
Եկ՛, ա՛ռ Սատան, ա՛ռ զայս վճիռ գերաբուն,
Այս կամք Տեառն է, կամք կամաց վեհագոյն։

Յայնժամ Սատան սողոսկելով ընդ առաջ
Ս.ռ զայն , ապա ընդ յետս յետ դարձ 'ի լանջ .
Ի տարտարոս ինչոյց, այլ խորք ստրսեցան ,
Ս.ղբարութեան սուրն առ նմա կաց պահպան .
Անդ ամենայն ինչ կատարեալ էր պարատ ,
Սատանն 'ի գործ անգթութեան էր անսատ .
Դարձ առ անտի ճեպեալ 'ի դուրս , ուրանօր
Կային ոև սև հոգիք դլուխք կախ 'ի կոր .
Եւ խռովեալ հանդոյն ծովու ալէկոծ՝
Ի վեր 'ի վայր ճարակ առեալ խաղայր բոց .
Հէք.ք՛ . լայի՛ն , և ճչեցի՛ն , ընդունա՛յն .
Քանզի հասեալ էր ժամանակ կորստեան .
Անդ տանչանաց խսկոյն բացաւ և անդունդ .
Սոսկատեսիլ ճիւաղք մատեան դունդադունդ .
Մ'էն մ'ի նացունց՝ որ ադամանդ էր սիրտ.իւր,
Ս.չքն յարիւն , շուրթն հրաբուղխ, և ձեռք սուր,
յԱնգթութեան կոչի պաշտօն ահարկու ,
Եւ պաշտամունքն սկիզբն առնուն լու 'ի լու .
Սկիզբն առնու անդ պատուհասն անվախճան,
Ընդ որ դողայ որ ինչ էակ ամենայն :
Ժամ էր չարեաց, ժամ վրիժուց, ժամ մահու ,
Քան զոր չեռեալ աշխարհ երբէք ահարկու
Օր , ժամանակ , և ոչ վայրկեան մի ահեղ ,
Որ արտասուաց յորդեալ գետոց տայ հեղեղ ,
Քամունք , սոսկմունք , ցնցմունք , և դողք յա-
ճախեն ,

Խաղան, գնան, և ընդ համայնըս վաղեն։
Ասա՛ղ. այսպէ՛ս եղեւ տեսին ահաւոր,
Այսպէս 'ի հուր անկաւ աշխարհ մեղաւոր.
Ահա՛ դժոխքն վառեաց զհուր իւր անշէջ,
Ահա տանջանքն սկիզբն առին անդ անվերջ.
Ահա ողբոց հառաչք լսին սրտաբեկ.
Աղեկտուր դան հեծեծանք, և հեկեկ։
Թէ յառաջին մարդաճենճեր տեսարան
Հայիլ և եթէ վարձէ 'ի տես ոք միայն,
Հանդուրժէ զաչս 'ի տեղին ձգել չար,
Ուր ոչ և սիրտ չարին տոկալ կայ երկար.
Սակայն տեսցուք, ո՞յք սեւազդեստք այնոքիկ,
Դէմք 'ի կնճիռ, սիրտք 'ի տագնապ յուսալիք.
Ի հրակուտակ անկեալ հնոց դեհենին,
Եւ քարկուեթեան անմաշ հրովն վառին.
Բոցք զմարմինըս պարարեն զնոցա,
Վառին հոգիք, ծուխ 'ի շրթանցն 'ի դուրս գայ.
Արդա՞ր պատիժ, և պատուհան է արժան,
Քանզի կեղծեօք զանմեղին սիրտ գողացան.
Եւ զյիմարն պատիր բանիւք խաբեցին,
Ի կորստեան վարեալ 'ի վիհ ահագին,
Զկարաց բուռն հարին զերթ ահեղ
Գազան, որ զգառն պատառել գայ անմեղ.
Ի սուրբ ատուէր խաչին մոռեալ 'ի դարան,
Զարին նեռիւ հարին զանմեղս ամենայն։
Քանի՛ լքեալ կուսանք նոցա յոտս սիրեւ

Առաջնահոս ներկան արեամբ վարդաթոյր .
Քանի՛ քանի՛ մատաղ հասակ դեղանի
Անկան թոշնեալ ընդ ստուերաւ բանաարկուի .
Պէս շուշանին , որ 'ի հովտին սուր մանքաղ
Հարեալ տապաստ ձգէ յերկիր 'ի նուաղ ,
Օ՜ձեա՛լք դոքա , ուխտադրուժ դոքա մարդ ,
Ահա հիւծին 'ի չարչարանս պատժապարտ ,
Մեղա՛յ դոչեն, զդարձ խնդրեն, զո՛ւր քարքառ.
Արդարութիւն է անողոք անաչառ :

Թէ զաչս յերկնորդ տանչանարան չրջէ ոք ,
Զեռնուն իշխանք 'ի հալեալ նիւթ հրաբորբոք
Եւ խանձուին և տապակին հրաշունչ ,
Անդ և յաւոյ , և հեծութեանց են շշունչ :

Զ'Անմեղ արիւն եառն հսկել տարապարտ ,
Բիւր որբս այրի թողեալ յերկրի յուսահատ .
Զ'Աղջ՝ հայրենիս, զ'Աստուած առին պատրուակ.
Եւ սին փառաց զհետ ընդեալ միայնակ ,
Աւերեցին զաշխարհ , և զմարդն կոխան
Ոտից առեալ , Աստուածանալ ձկտեցան .
Ահա՛ զրկեալն ողբայ թէ , այր մի միայն
Զանուն բարւոյ հասարակաց կրթութեան
Առեալ՝ պաշտպան եկաց մարդոյ իրաւանց ,
Պաշտպանութիւն իւր փոխեցաւ 'ի նախանձ .
Միւսմ գեղոյ , այլսմ փառաց հաճոյից
Մոլեգնաբար ըղձայաւ սիրտն թիւնալից .
Եւ բռնութիւն այսպէս ծնաւ վիշտ , աւէր ,

Տանչէր զմարդքն , ում աւանդ տուեալ էր .
Ս.՛րք անողորմք , այժմ ողբով խնդրեն զուրթ ,
Սակայն Ս.ատուած Հրեշտակ ընդդէմ են անդուրթ
Զի որ զանպարտքն պարտապան եւ արեան,
Զէ տալ օրէն նմա շնորհ զթութեան :

Երրորդն ահա՛ . զա ծնողացն է տեղի ,
Ուր հետ զհետ կայծակ խորշակ արձակի .
Եւ հարկանէ , և լքանին անդ համայն ,
Որք պարտաղանց կացին զաւուրս ամենայն ,
զ Կին առին յամուսնութեան սուրբ անուն,
Ս.յլ պղծեցին զամուսնութեան սրբութիւն .
Ուստերք տուան նոցա , դստերք 'ի խնամ,
Ս.յլ խնամոց խոփան թողին անխնամ .
Եւ զոհ եռուն զամենեսին մոլութեան ,
Ս.մենեցուն ջամբեալ զկաթն մահուան .

Իբրեւ ոք զի , ընու զթոյն յաղբերց ջուրս ,
Եւ բաժանին ջուրքն առուակ առուակ բիւրս ;
Որոց և վինն առնէ զմիւս թունաւոր
Եվին հանգոյն է որդին յազգ իւր բոլոր .
Ս.յսպէս ծնողք թոյն մոլութեան դառնագին
Եռուն ջանքեալ անմեղ որդւոցն ընդ կաթին .
Եւ այն յորդոց յորդիս խաղայ մահու թոյն,
Միոյն մահուամբ դայ, մահանայ անթիւ ոուն ,
Քան զոճրագործ մեղս մարդոյ ծանր են յոյժ
Մեղք ծնողաց , որ որդեկաց չեն գգոյշ :
Ոճրագործաց ցաւալի վայրն է չորրորդ ,

Յոլ աղտեղիք նեխեալ բուրեն դարշահոտ
Անդ, ուր խառնեալ օձք տան նոցա խայթոց յար,
Վէրս 'ի վերայ վիրաց թողեալ վշտահար .
Այսպէս յանվերջ տագնապ անկեալ ցաւագին ,
Հեծեծանաց ձայնքըն ողորմ ծաւալին .
Եղո՛ւկ, 'ի զո՛ւր խնդրեն թագչիլ խորշ մի գէթ,
Քանզի պնդին զհետ և ցաւք և աղէտ .
Ի զուր ընդ այս ընդ այն ձգին ճէպ 'ի ճէպ ,
Զի յԱմենուստ տանջանք դոյա դան հանդէպ.
Այսպէս թախծեալ լքեալ մնան 'ի վահատ ,
Շունչք պակասին , հեւք յաճախեն յուսահատ,
Եւ ի ժամէ ժամ յառնեն խոր հառաչանք ,
Վիրապ մեղաց տայ զողջանաց արձագանք .
Այլ ո՞ւստ՝ օգուտ , արդարութեան անաչուռ
Լցեալ է չափ , վրկանաց ոչ դոյ հնար .
Զի բողոքեն արիւնք հեղեալք ընդունայն ,
Զի արիւնք են հզօր բողոք անվախճան ։

Ի ձայն՝ յորում ծանրանայ թանձր խաւար ,
Է զզուելի անդ մի տեղի ամօթհար .
Դ'անձնասիրին է հեշտութեանց վառարան ,
Դա իսկ չարեաց է հինգերրորդ կայարան .
Անդ նախանձոտն , անդ է ժլատ , անդ մոլին ,
Անդ ստախօս , անդ ուրացող դարշելին .
Անդ այնոքիկ են , որ 'ի բուռն կրից
Վարեալ 'ի մեղս անկան տենչիւ յուսալից .
Եւ օրինաց ընդդէմ ըմբոստ կացեալ միշտ ,

Ինքեանս և եթ ամբարեցին զԻսրաեանց վիշտ.
Որդունք անէեռ խաղան յանձինքս ահա,
Յեցք և ուսիչք մաշեն զսիրտս նոցա.
Սղիք ճմլին, լեարդ նուաղեալ կայ 'ի տապ,
Դոցա բաժինն է սատիկ ցաւ, և տագնապ.
Որոց չէր յոյս յաւիտենին նոր կենաց,
Այնց և տուաւ անյոյս տանջանք յաւիտեանց.
Ո՛վ ահարկու անդարձ վճիռ մեծատատ,
Ամ ոչ բնաւ ոք չկարէ դնել սատ.
Ո՛հ, հնդեքին այս պատրաստեալ պատժարանք
զՏանջանացն սկիզբն առին կարդ 'ի կարդ.
Ոչք հեծեծանք, սատիկ դոչիւն աղեբէկ
Յերկինս 'ի վեր ելին դնալ 'ի հեկեկ.
Եւ Սրեւելք, և Սրեւմուտք, և Հարաւ
Հիւսիս տեսեալ զայս պատուհաս անդրաւ,
զԴողանի հարեալ անդէն սոսկային,
Ընդ որ երկինք երկիր ահիւ սարսեցին,
Թաղեաւ արեւն յայնժամ 'ի ծալքս ամպոց,
Երկեաւ լուսին յայնչափ ձայնից ողբակոծ.
Ծով տխրեցաւ, զի ոչ զօրէր անդր 'ի հուր,
Եւ 'ի տագնապ հասուցանել ումպ մի ջուր.
Պարապ մինչոցք, դատարկ համայն տիեզերք,
Լոկ տանջանաց կայր մշտատեւ եղերերդ,
Ունայնութիւն ունայնութեանց անսահման
Ամենայն ինչ աւա՜ղ եղեւ ընդունայն:

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏՈՒ
Ի ԽԱՉՆ ՓՐԿԱՐԱՐ

Ի լուսաբերն 'ի բլուր՝
Մինչ ակն աւուր կայ 'ի փակ,
ՅԱրշալուսոյն ոսկեհուռ
Զարթնու երկնից ներդաշնակ.

Յայնժամ յառնէ տիեզերք,
ԶԿողն 'ի լոյս շրջեալ վառ,
Մարդն կանխէ 'ի նախերգ
Խաչեցելոյն փրկարար.

Քանզի ո՛վ տէր, 'ի մէջ ամպոց ճիւնագեղ,
Յոր վեհապանծ բազմիս փառօքդ Աստծեան,
Ահա սուրբ խաչ քո անդ՝ շողայ լուսազեղ
Յինքն և եթ յուսացելոցս ապաստան։

Սյլ թող յայգուէ յայգ 'ի վեր
Սիրտ մեր եբրեւ զբուրվառ
Ճոճի, լանկի աղօթիկեր
Զոտիւք խաչիդ կենարար.

Օգնեա՛, զի մեք ընդ առաջ
Ելցուք սիրով և լանկով,
Սրտիւ պաշտել զսուրբ Խաչ
Աստուծեան զինչ ցօղով.
Օգնեա՛ Յիսուս կենդանի,

Հօրն համայնից անքակ սէր,
Որ յաւերաց աշխարհի
զՔեզ կարդամք անհամբեր.

Ընկալ յայգուէ զմեր խոնարհ զայս հայցուած,
Զի ողորմած և բարերար ես Աստուած։

ԹՌՉՆԻԿՆ ՊԱՆԴՈՒԽՏ
ԽՆԴՐԷ ԶՀԱՅՐԵՆԻ ԲՈՑՆ ԻՒՐ

Երկիր ննջէ անուշ քնով,
Խաղաղ ամեն միտք ու հոգի.
Քո սիրտ էլո՞ւմ իբրեւ զծով
Փոթորկայոյզ կը խռովի,

Կամիս թռչիլ. անցնիլ սարեր,
Ինչպէս հրեշտակ մի այգաբեր։

Դեռ ակն աւուր նոր բացուեցաւ,
Ո՞ւր Աղաւնեակ իմ, ո՞ւր այդպէս.
Բունիդ կա՞ր օտ սիրտդ ինկաւ,
Որ արտաքէնչ կ'աճապարես,

Թռչիս, կանցնիս սարեր ձորեր,
Ինչպէս հրեշտակ սլանայ յերթեր.

Ի լերանց ծայր հասնիս խոնջած,
Եւ կարօտիւ աչերդ հային

Այլ և յահեակ շուրջդ դարձած
Մէկ մը յերկիր, մէկ մ'ալ յերկին,
Եւ զայն թոյլուս, կանցնիս սարեր,
Ինչպէս հրեշտակ սիրանուէր։

Մերթ 'ի դաշտին կանաչագեղ
Տեսնես պանդուխտ կենացդ ընկեր՝
Հազարաւոր ծաղիկ շքեղ,
Եւ կը ցօղես մարգարտահեռ,
'Ւանտի ցաւած անցնիս սարեր,
Ինչպէս հրեշտակ մի գուժաբեր։

Եւ մերթ առուին յեզը դադար
Երթաս, առնուս լքեալ թեւով,
Քոյ աշխարհին կարծես նեկտար
Անդ կը հոսէ քաղցրիկ ու զով.
Սակայն խափուած կ'անցնիս սարեր
Ինչպէս հրեշտակ սգապատկեր։

Էր Սրեւմուտք գնաս ազատ,
Չէ օթեւան քո այն բնիկ,
Եւ ոչ Հիւսիսն այն սառնապատ
Քո սիրեցեալ չ'է հայրենիք.
Ի զուր թեւես, անցնիս սարեր
Ինչպէս հրեշտակ մի տարուբեր։

Պանդո՛ւխտ թռչնիկ, պահ մը կեցիր,
Քեզ հարցանէ մայրդ աղեկէզ,

Հայրը դ սիրով քո վշտակիր
Հառաչանօք խնդրէ զքեզ.
Հերի՛ք անցնիս սարեր ձորեր,
Ինչպէս հրեշտակ մի ոսկեհեր,

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

ՁՕՆ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅՍ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԶԱԻԱԿՈՒՆՍ ԻՄ

Երբ կենայս արեւ բացաւ վարդաձիր,
Բարձրացաւ յամպեր, ծաղեց լուսալիր,
Երբ այդաբլրոյն վրայէն 'ի վայր
Դէպ 'ի միջօրէ սրընթաց կուդայր,
Տեսի զհիմէն. աչերն սիրարկուք,
Ոսկի խնկանոց լցած խունկ կնդրուկ,
Ծխեց, և հոդւոյս մէջ խաղաց սփիւռ սիրոյ
բոյր քաղցրիկ,
Զոր կենայ պարդեւ տուած է երկինք:
Յայնժամ ընդ պարկեշտ ձեր մօր հետ 'ի մի,
Եղանք հայր ու մայր, ամոլք սիրելի.

Եւ Աստուած օրհնեց, և աճեցայք դուք՝
Զորեքին բաղբոջք, կենացս անուշունք։

Հայկունի պտուղն եղար առաջին
Քո հօր և քո մօր ուխտաւոր անձին.
Եւ նոր թռչնեկի պէս առեր նոր թեւ,
Ելար, սրացար դէպի քո արեւ.
Նոր նոր արհեստից անդ բանալ հանդէս,
Ուր բիւր յիշատակք գիտութեանց 'ի տես
Պահած են քեզի սրբազինն շխարք քո բնիկ երկրին,
Երկիր անդրանիկ բոլոր աշխարհին։

Թռի՛ր, սլացի՛ր, թող հոն միտքդ վառ
Խորշերէ 'ի խորշ, վայրերէ 'ի վայր
Որոնէ, գտնայ, և լոյս տայ նիւթին,
Զի նիւթն է ամեն շինուածոց հոգին։

Աղաւնեակ իմ դու առեր սուր դրիչ,
Աղգի՝ հայրենեաց՝ մարդոյ նորոգիչ,
Եւ ծառն ու ծաղիկ, վտակն ու ծմակ
զԱստուած և զերկինք, զծովն ու ցամաք
Քո սրտիդ ընկեր ընտրեցիր սիրով,
Սիրա, զոր յօրրանէդ գրկեց աշխոյժով,
Գրէ՛, այլ գրէ՛, գիրն է քո հոգին,
Երկինք ու երկիր ունկն տան գրին.
Գիրն անխօս լեզու, այլ ձայն է հզօր,
Կը հանի դարէ 'ի դար զօրաւոր.
Գրէ, ու խօսէ հետ քո ընկերաց,
Ընկե՛րք սիրական, ընկերք են կենաց՝

Խօսէ, քաղցրաձայն իմ սիրուն դստրիկ,
Որ ձայն տայ, քեզի սիրաս սդառիկ,
Ապա զիմ կռնակ տուած սև հողին հրճուիմ
խնդաղդեաց,
Հառաչանքս յինէն թոթափին՝ ի բաց։
Հայկանոյշ քնարը ընտրեցիր դու,
Ասիր թէ—նորա ձայնն է սիրարկու, —
Զայն առեր, ինքեր մի ծաղկաւէտ դաշտ,
Ուր Աստուած կինչնէր, երբ ընդ մեզ էր հաշտ.
Հարէ, ու երդէ, հայեցի սրտով,
Հայեցի խօսքով, հայեցի ձայնով,
Թող քո հրեշտակի ձայնիկդ հանի հոգւոյս փափ-
կադին,
Զի շատ քաղցրէ հօր ձայնիկ որդեկին,
Որ հաղարաւոր յոյսերէ եռեւ
Կը բանայ դլխին նորանոր արեւ.
Յայնժամ նոր ոգի առնում, նոր աշխոյժ,
Զերթ պատանեկան եռանդ ապաժոյժ։
Ռամել՝ դու վերջին կենաց իմ հատուած,
Քաղեցիր զոգի՝ սրտիս մնացուած.
Վրձինն ընտրեցեր յասպարէզ լուսոյ,
Յոր կեանք կան կենաց, և փայլք հանճարոյ,
Գծէ որ, տեսնեմ Ռափայել փոքրիկ
Զքո բնածին դաւառն ու տնիկ.
Թող տեսնէ աշխարհ աբ մի սրտիդ մէջ իղձ, սէր,
ու կրակ,
Թող տեսնէ մայրիկդ զհոգւոյդ փայլակ,

Որ իւր գրկաց մէջ զքեզ հաղար երգով
Բարւոյն նախանձով, գեղոյն ճաշակով
Մեծցուց, նուիրեց Աստուծոյ, 'ւաղգիս,
Նուէր, որ նոյն ինքն է պատկեր սրտիս։

Ո՛ մայր որդեկացս զայս չորս Մուսայն առ,
Գնա՛ 'ի սրբոց նախընծայ գաւառ,
Հոն Սէր ու Պարտիք երդեցէք կրկին
Յաւերս հինաւուրց ծերուկ աշխարհին.
Եւ անդ օրհնեցէք սիրով քաղցրաձայն
զՍուլթան ՀԱՄԻՏ, և զազգն Օսմանեան
Որոց անմոռաց շնորհիւ տեսան մեր նախնիք
ու մեք,
Մեր ազատ Կրօնք, մեր ազատ օրէնք,
Եւ ես զայն լսեմ, և այլ թող հրճուի
Իմ հոգի տխուր, և սիրտ թախծալի։

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Մի՛ դու հովիկ, պաղ ձեռքերով բա՛ւ չեմ հա-
րես տախտակ սրտի,
Վասն զի այն հրով գրուած կարմիր մատեան
մ'է հնոցի.
Մի՛ դու. զի հոն ոչ եւս կայ խանդ վառվռուն,
'ւաշխոյժ ոգի,

Այն աւերակ եղաւ հիմայ, բաբէ՛. հոն հուր կը բորբոքի.
Հրդեհ կայ հոն, հրդե՛հ ահեղ, թէ գեա յորդեա, չունի օգուտ.
Թէ միտք՝ թէ սիրտ՝ թէ գիտութիւն, և ամեն ճիգ են անօգուտ.
Զի այն չէ հուր ինչ նիւթական, ոչ շիջանի, ոչ վերջանայ,
Նա ինքն անշէջ բոց է վշտաց, որ մինչ 'ի մահ վառ կը մնայ.
Դարձի՛ր հովիկ զովահնչիւն, գնա՛ շնչէ՛ ծաղկանց երես,
Զոր սիրահարն ու սիրուհին փոխանակեն սիրահանդէս։

Խոնջած թեւօք ուստի՞ կուգաս այդպէս արագ սիրո՛ւն թռչնակ,
Երո՞ւմ թողեր դաշտն ու անտառ, քո ծաղկաւոր ճոյն ու ծմակ,
Եւ վրդովես միայնութեան ժամերս երգով քո անդադար,
Երգե՛ր, զոր թէ քանի լսեմ, կը լինի սիրոս վշտահար.
Լռէ՛ երգերդ սիրաշարժ, զի չունիմ երգ քեզ փոխադարձ,
Իմ արտասուք զերգ իմ սրտին առին, տարին 'ի ծով վշտաց.

Բեկաւ քնարս , եղո՛ւկ , նորա բեկորն ալեաց 'ի կուլ տուի ,
Զունիմ երգել ծաղիկ , ու սէր չունիմ , զի ձայն այլ կենդանի .
Անգէ՛տ թռչնակ մի՛. ինչ 'ի զուր խնդրեր յինէն երգ ու ծաղիկ ,
Ծաղի՞կ, գաղտնիքն է իմ հոգւոյս, և ե՞րգ, շիրմիս է մեղեդիկ .
Թող ,որ , հսեն ականոզիքս , կենաց վայելքն է սրտիս փուշ ,
Լացող սրտի լացն է սիրուն , վշտացողին վիշտն է անուշ .
Թռչնակ այլ մի՛ կենար իմ քով, հեռի՛ յինէն , գնա՛ 'ի բաց ,
Հեռի՛ , զի մի գուցէ դքեզ վարեն 'ի վիշտ գեռաք իմ լալեաց .
Թռի՛ր , գնա՛ , ու կա՛ց յեղերս արծաթագեղ ջինջ առուակին ,
Ուր գեղանի խումբ խումբ աղջիկ սիրաժպիտ հային , հրճուին ։
Սարէ ձորէ խոխոջաձայն ո՞ւր կը վազես մանկիկ վտակ ,
Աւետելով անուշ ձայնիւ գարնան գալուստը կենսունակ՝
Մի՛ իմ քովէս անցնիր , գնար , ուր յեց 'ի հող կամ ցաւագին ,

Զի թէ զքեզ տեսանեմ, յիշեմ զիմ մանկութիւն գեղեցկագին.
Եթէ զքեզ տեսանեմ՝ յայնժամ միտքս կուգայ թ'ես ալ փութով
Իբրեւ զքեզ զուարթաձայն կ'ընթանայի կենաց 'ի ծով.
Իբա՛ց վտակ. մի այլ խառներ ձայնդ ողբոցս, մի այլ հերի՛ք.
Ա՜ւարայրի դէպի 'ի դաշտ դնա՛, հոսէ՛ պաղո՛ւկ ջրիկ.
Ուր որ սոխակը սիրահար դեռ լինձ նման սգայ յիւր վարդ,
Այլ ո՞ւր գարուն կենաց աղատ, այլ ո՞ւր սիրոյ վարդն զուարթ։
Եւ դուք՝ սառո՛ւէրք դիշերականք զի՞ կայք դիզուած աչացս հանդէպ,
Զի՞ զմռաւս ածէք դաժան զիմ անցելոյն զտըխուր վէպ.
Զի՞ պաշարէք զայդ լռակաց աշխարհ, որ տունն է մեռելոց,
Ուստի 'ի դուրս գայ ժամէ ժամ վշտացելոյն հառաչն ու կոծ.
Իբա՛ց սառուէրք, ահա և ոտք իմ աներկիւղ կոխեն զայն հող,
Այլ յօժար է սակայն հոգիս, չիք ընդ կրծովս իմ սրտադող,

Զի չի՛ք այլ մահ, թէ միանգամ սիրաը մեռնի
սիրող մարդուն,
Ասուած մէկ մահ դրաւ կենայ, չունի օրէնք
երկրորդ մահուն.
Սիրոյ սրովքն սայրասուր ես միանգամ առի
հարուած,
Անբուժելի հարո՛ւած սիրոյ, հարուած մահու
դուարթ կենաց.
Այլ դերեզմանք մի սոսկաձայն ձեր հրաւէր մի
տայք ինձի,
Ես կենդանւոյն եմ մի մեռեալ, ես դերեզման
ինքս ինձի.
Ահա վայելք ու փառք թողում, ահա առ ոտն
կոխեմ, կանցնիմ.
Թող աւերակ լինի աշխարհ, թող ճնշուի սիրտ
ոխերիմ,
Ոչ ես եմ ես, կամ, այլ չկամ, այս իմ ահա
կեանք սիրելիք,
Զի չի՛ք այլ յոյս այս աքսորէս դառնալ սիրոյս
իմ հայրենիք։

Մի դու լուսնակ, երբ մտախոհ 'ի գիշերին
Մոլորաքայլ կը թափառիմ ես յանտառին,
Մի՛ դու պաղուկ շողդ արձակէր ճառկիս վերև,
Ժողվէ՛ շողերդ. ու ամփոփէ ամպոց ներքեւ.
Թող որ, մթին մէջ խարխափեմ ես ընդ երկար,
Յաւած սրտի մութն լաւ է քան լոյսն վառ.
Թող որ մթով փակին իմ այս աչեր խոնջած,

Մութն պահէ թող զայս հեղեղ իմ արտասուաց.
Բայց ինձ ասէք՝, ի՞նչ այն մրմունջ դայ ականջիս,
Մէկն է՞, ով է. կը փսփսայ 'ի մէջ արտիս.
«Դժոխք» կըսէ «հուր՝ բոց՝ տանջանք կայ յետ կենաց»
Կարծես կոյր է, ու չտեսները դժոխքն յիմ անձ.
«Դժոխք» կըսէ, քան զիմ դժոխք ո՞ւր կայ հզօր,
Ուր անմաշ հուր. անապառ բոց վառի բոլոր.
Որուամ թէ մօտ դայ հրեշտակ, կը խանձոտի,
Ծոմն ցամքի, եթէ անցնիլ ուզէ անտի.
Հով զովաշունչ եթէ փորձել գնայ ընդ այն,
Իսկոյն փոխի 'ի սաստիկ բոց ինչ գեհենեան.
Աստուած անգամ թէ դայ տեսնել զայս նոր դժոխք,
Կը խլրտին՝ ընդդէմ նորա վրէժք և ոխք.
Այլ զի՞նչ քան զայս տանջանարան, զի՞նչ քան ահեղ
Հրոյ՝ բոցոյ մահափրփուր ունզուսպ հեղեղ.
Որ զկորով իղձ և հանճար, և դեղ սիրոյն
Յական քթթել վառէ, փոխէ յունայնութիւն.
Երթա՛յք այլ դուք հով և թռչնակ, վտակ լուսնակ,
Թողէք առ իս միայնութեան իմ ժամանակ.
Միայնութիւն թեպէտ չտայ կենաց փրկանք,
Միայնութիւն անյուսութեան են սփոփանք։

ՀԱՌԱՋԱՆՔ ԾԵՐՈՒՆՈՒՆ Ի ՆՈՐ ՏԱՐԻՆ

Ո՞ ծերունի ձեռն 'ի ճակատ ի՞նչ խորհիս,
Գերեզմանաց մէջը տխուր կը շրջիս.
Շէնը թողած, աւերակներ խնդրես լուռ,
Գնաս ծածկիլ միայնութեան մէջ տխուր.
Աչքդ արևէն յետ դարձուցած 'ի խաւար,
Դէպ յերեկոյ կուղղես քայլերդ անդադար.
Կա՛յ ծերունի, դեռ վերջալոյս մ'ալ ունիս,
Քեզ ողջունող նոր տարւոյ յոյս մ'ալ ունիս.
Թող շիրիմներ, ահա՛ ծաղկօք լի է դաշտ.
Գնա՛, խաղա՛ մարդին ծաղկին հետը հաշտ.
Գնա, նատէ՛ եղը պաղուի առուակին,
Ուր արծաթի ջուրք հետ ղհետ վտակին.
Ծաղկոտ լերանց հայէ երեսը հանդարտ,
Որ նորոգի քեզ և դարուն մի զուարթ.
Ծաղկունք գլխոյդ լինին պսակ դեղանի,
Ծառոց լայն լայն տերեւք քեզ տան հովանի.
Կակուղ ձեռօք գայ և զեփիւռ զովագին
Շոյել մաղթափ ճակատդ, որ մօտ է հողին.
Դէմդ բացուի հոն նոր կենաց տեսարան,
Ուր կը վայլին ամեն վայելք բնութեան.
Աչքդ դէպ հոն շրջէ անդամ մ'ալ սիրով,
Դարձ'իր, կենաց վրայ հայէ՛ աշխոյժով.
Տե՛ս, ի՞նչ կայտառ խաղայ մատաղ մանկտին,
Հայր, մայր, եղբայր շուրջ բոլորած կը հրճուին.

Տե՛ս , ի՞նչ ուրախ թև 'ի թև զոյգ զոյգ գնան
Աղջիկ ու մանչ , երիտասարդ ամենայն .
Հարուսաւ՝ աղքատ, տէր՝ ու ծառայ , քաջ՝ տկար
Ամենք անհոգ , ամենք անփոյթ երգեն յար՝
Պարեն, խայտան , սէրը սրտից մէջ տայ դարձ,
Հեշտիւ անցնին նոցա ժամերը կենաց .
Դու ի՞նչ այդպէս դրած կռնակդ հողին՝
Կաս յուսահատ , որ հնչէ ժամդ յետին .
Դարձէ՛ ծերուկ , շարժէ՛ որ կեանքդ նորոգի ,
Դարձէ՛, որ տայ քեզի նոր կեանք նոր տարի ։

« Երիտասա՛րդ , ատոնք երազք են բոլոր ,
«Սուտ են հաճոյք, սուտ կեանք, և սուտ տարի նոր.
« Սուտ են օրեր , երեկն այսօր չերեւի ,
« Սուտ է և վաղն , այն ալ խաւիէ , ու կանցնի.
« Օրերն այսպէս դան , անցնին , մարդն սպասէ
« Որ դայ դարուն , և կենաց օր նորոգէ .
« Ո՛ մարդ տխմար , բա՛ւ հաճոյից երթաս հետ,
« Հաճոյք պատրանք մ'է քո կենաց դառնաղէտ.
« Հաճոյք շատեր վարեց , տարաւ դերեզման ,
« Հաճոյքը ցուրտ ցուրտ քամիներն են աշնան
« Որոնք որչափ թափին , նոյնչափ և կեանքին
« Կանաչ տերեւք դեղնած մէկ մէկ կը թափին.
« Այս շիրիմներ՝ զոր կը տեսնես սեւամած ,
« Ի՞նչ աշխարհներ ունի իւր մէջն ամփոփած.
« Աշխարհական , կղեր , գիտուն , և իշխան,
« Եւ թագաւոր , և զօրավար զօրական,

« Երիտասարդ՝ մանկիկ, և ծերը տկար
« Մէկ վերմակի տակ կը ննջեն հաւասար.
« Է՛ մահացու, հոս պիտի դաս վերջապէս,
« Ուր որ տակաւ տակաւ ահա մօտիմ ես.
« Ծաղիկ ու դաշտ, նոր տարի շատ խափեց դիս,
« Հասակ կորով առաւ, ձգեց լոկ հոգիս.
« Նոյնպէս և քեզ այդ հաճոյից սին պատրանք
« Ուշ թէ կանուխ, պիտի լինին գերեզմանք.
« Ալ ի՞նչ շարժիմ, սուտ է նոր կեանք, նոր տարի,
« Կեանքը շիրմէն անդին, հո՛ն է նոր տարի։

ԽՆԴԻՐ ԱՌ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նա՛ր տարի ո՞ւր կանցնիս կ'երթաս արարչաւ,
Բարիք՝ վայելք տանելով հետդ ամբաւ.
Թէ ՅԱնգղիա կերթաս ընծայ տանելով,
Նորա երկիր լի է ոսկւով արծաթով։
Թէ Գաղղիա կերթաս սիրել դիտութեան
Լոյս, այն վաղուց անդ-ցոլացաւ անսահման։
Գերմանիա չէ քեզ կարօտ բնաւին,
Զի հոն կենաց անշէջ ջահեր կը վառին.
Եւ հոն արհեստքն իւր պարզեց դրոշակ,
Ուր որ արհեստ, հոն վերջապէս յաղթանակ,
Իսկ դէպ Հիւսիս զուր տեղ մ'երթար դու այսօր,
Այն Ռուսական ազգին ընել բարիք նոր.

Զի նա մշակն ժառանգ դառաւ յԱդամայ,
Եւ Դեմետրէ սերտ բարեկամ է նմա։
Մի դու առ այլ ազգեր երթար, զի անոնք
Բազդի դիրքի բերմամբ եղած են բարուք.
Եւ ամեն մէկ օր է նոցա տարի նոր,
Կը վայելեն երջանկութիւն նորանոր.
Դարձ նոր տարի, ե՛կ յԱրեւելս բարեբեր տարեշրջան
Ուր Ժողովուրդն քեզ ակն ունի անհամբեր,
Վաճառականն առեւտուրէն չունի յոյս,
Նա ոչ յառաջ, այլ միշտ ընդ յետ կ՚երթայ կոյս՝
Արհեստաւորն անյոյս, ձգեր աշխատանք,
Զի չտեսներ իւր արհեստին բնաւ յարդ.
Կարօտ մշակն նստած տխուր յուսալիք,
Ցանքն հնձելու չունի մանքաղ սուր դորձիք.
Հէք այր ու կին դէմ արեւու տօթադին,
Զոյգ լծակից քաղեն զհունձս միասին.
Ուրիշ մ՚անդին ձեռքը դրկաց մէջ ամփոփ,
Նստեր կուլայ, թէ կոտրեցաւ արոր, խոր.
Զոյգ ձգին մին անդութ մ՚առաւ, ու տարաւ,
Հաղար վիրաց վրայ նոր վէրք մ՚ալ բացաւ.
Սիրան 'ի ցաւ, աչքն լցաւ ցօղ ջեռօտ,
Ցօղ որ, կարկտի նման թափի կրակոտ.
Լուծքը մնաց, ոչ եղն կայ, աչ դրամ,
Ոչ օգնական, որ ձեռքն տայ միանգամ.
Ոչ ազգայինք, և ոչ օտարք չեն սատար,
Անյուսութիւն զինքն պատէ անդադար.
Զունի հնար, կուզէ լծիլ եզին հետ,

Աստուած իմ ի՞նչ է այս վիճակ դառնաղէտ.
Ո՛հ մարդ է այն, ուրկէ ամեն առաւօտու
Ծնրադրութիւն ս՚աղօթք խնդրես քեզ հլու,
Անմեղ է ինք, արհեստն արդար, մեծ է ջանք,
Ա՛ռ ի՞նչ ուրեմն դժոխոց այս տանջանք.
Խրկէ՛ ո՞վ տէր քո դիմութիւն տարուոյս հետ.
Որ գայ բառնայ հիքին ցաւերը հետ զհետ։

ՀԻՆ ՏՍՐԻՈՅՆ ՀԱՇԻԼ

Հինն գնայ, եկաւ նոր,
Բայուեցաւ նոր տեսարան
Ինչ որ երէկ, չէ՛ այսօր,
Փոխուած է ինչ ամենայն։

Մարդիկ խումբ խումբ միացած,
Աստ անդ կազմեր են ժողով,
Ի խոր խորհուրդ ընկղմած,
Են անցելոյն հին հաշուով։

Վաճառականք սեղանին
Շուրջը նստած մտախոհ
Զեռն 'ի ճակատ կը խորհին,
Հին տարիէն են դժդոհ։

Կալուածոց տէր կը նայի,
Որ իւր աղբիւր հասոյթին

Ցամքեցոյց ցաւալի
Սա անողորմ հին տարին։
Պրճնասէր կինն ժոլի
Տրտունչ կընէ սաստկագին,
Թէ զինք ձգեց երեսի
Վրայ նախանձ հին տարին։
Եւ այրն զեղխ անառակ
Խօսքը չըներ իւր մեղքին,
Ներեր, խօսի մեզ առակ
Թէ, զեշ անցաւ նոր տարին։
Արհեստաւորն ձեռք 'ի ծոց
Կուլայ վերայ իւր բաղդին,
Թէ 'ի վիճակ ողբակոծ
Վարեց, ձգեց հին տարին։
Գրագէտներն աղքատ
Գրչէ 'ի զատ ինչ չունին,
Կըսեն—չոր հաց մը առատ
Մեզ զլացաւ հին տարին։—
Վեհապետներ հետ միմեանց
Սիրոյ կեղծեօք կը խօսին,
Թէ զինդիրս աշխարհաց
Շատ կնճռոտեց հին տարին։
Զինուորն յից յիւր նիզակ,
Յուսով մնայ առաւօտին,
Անքուն պահէ զբանակ,
Որ զմուրթ վարէ հին տարին։

Ձեռքը առած մահաբեր
Հուր, սուր, գնտակը մարտին,
Զարկաւ, վոխեց քաղաքներ
Ամերակի հին տարին։

Անթիւ մարդկան քաջարի
Կեանքը տուաւ սեւ հողին,
Կին որդւովքն այրի
Զգեց եղեռն հին տարին։

Որքն անխնամ օրերով
Երեսն 'ի հող լալագին,
Կըսէ—տարաւ դուխ՝ դորով
Սա մարդասպան հին տարին։—

Այսպէս բազմաց յորդառատ
Աչքէն արցունք կը թափին,
Այսպէս զամէնք յուսահատ
Ըրաւ անդուխ հին տարին։

Աւեր ու մահ, լաց ու կոծ
Իրաւ լցաւ մեր սահման,
Սրտաճմլիկ ձայնք ողբոց
Օր ըստ օրէ շատացան.

Բայց հին տարին ի՞նչ ընէ,
Երբ դործերնիս ըլլայ չար՝
Զի ամէն ով որ վնասէ,
Վնասուն ինքն է պատճառ։

Ի ԿԻՆՆ ՄՈԼԻ

Ելբ վողոցէ 'ի վողոց անցնիմ, դառնամ ամէն օր,
Այրերէ շատ աւելի կին կը տեսնեմ հոն բոլոր.
Հագուած՝ ագուած, մէկ մը վեր, և մէկ մը վար կը շրջի,
Տունը թողած մենաւոր, ընդ այս ընդ այն դեռ դեղրի.
Ո՛վ կին. չունի՞ս տան մէջ դործ, և կամ թէ դու չունի՞ս տուն,
Որ վաճառքի պէս պատրաստ, շրջիս 'ի տես ամենուն.
Ամսուած գքեզ սահմանեց, որ հիմն ըլլաս քոյին տան,
Անոր վրայ հսկելու դերթ հրեշտակ պահապան.
Այր ու զաւակ, կեանք պատիւ, զայս ամենայն յանձնեց քեզ,
Իսկ դու ի՞նչու զայս քոյին սրբազան պարտք մոռցեր ես,
Թողած ծնողք, և քո այր, թողած զաւակ, աղդական,
Առաւօտէ մինչ 'ըիկուն դու ի՞նչ ունիս 'ի շուկան.
Եթէ կին ես, պարտք ունիս դու օրինօք քո էրկան,

Եթէ մայր ես, պարտք ունիս զաւակներուդ կրթութեան.
Թէ աղջիկ ես, պարտք ունիս ապագայիդ 'ի վճար,
Նորոգ տներ շինելու, մայր ըլլալու օգտակար.
Եթէ մարդ ես պարտք ունիս դու Աստուծոյ, և ազգիդ,
Թէ սիրտ ունիս, կը պարտիս հաճոյ լինիլ ընկերիդ.
Այլ դու սակայն մարդկութեան ընաւ չունիս այս շնորհ,
Ի կերպարանս մարդոյ տան մէջ օձ մ'ես թունաւոր.
Պարտուց մատեանդ է պճրանք, և դասագիրքդ հայելին,
Ներկ ու վրձին և նաղանք, խորհրդականք են քոյին.
Ոչով կուանիս, ու կապրիս, զծիծաղն յարդդրես քեզ,
Եւ սէրն լիրբ, նեռնք կեղծիք քեզ մեծ պատիւ համարես.
Սակայն մարդն պատուով է մարդ, առանց պատուոյ չ'է ինչ ոք,
Համեստութիւնն է կնոջ զարդ, և արբութիւն իր դեղանք.
Ընտանեկան պարտուց դիտակ, համեստաւ փայլ մի տիկին

Յարդ ու արժէք ունի հազար, քան զդոհարս թանկագին.
Բայց կինն լիրբ, և անօրէն է մի ճիւաղ սոսկալի,
Երիկ՝ զաւակ, ծնող և ազգ, պատիւ կոխէ, ու կ'անցնի.
Անխնայեաց դէմքն է դարշելի, զի հարազատ չունի զոյն,
Հասարակաց պիղծ զբօսանք, աղբանոցի է հանգոյն,
Անազդոյն կրէ նա սիրտ, ու չիմացեր ամէն ինչ,
Վայրենական իւր հաճոյից համար զոհել առ ոչ ինչ.
Քանի՛ քանի՛ կեանք ու պատիւ, քանի՛ տներ աւերակ
Ըրին, կընեն, և դեռ պիտի ընեն կիներն անառակ.
Նոքա դրոց իսօքին նման յարդ պատիւ չեն իմանար,
Սատան ծնած, դաղան մեծցած, են անանոց հաւասար։

ՄՈԼԻՆԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Մարդ՝ որ չունի ոչ սիրտ, և ոչ ուղիղ միտք,
Վշտէ 'ի վիշտ վարեն զնա միշտ չարիք.
—Այսօր կաղանդ, այսօր զատիկ, այսօր տօն—
Կըսէ, 'և ամեն բան կը թողու, վազէ հոն,
Ուր կեր ու խում, ուր պար ու երգ, ուր նուագ,
Բիւր հեշտութեանց ձայներ կուտան արձագանք.
Թ'երբ գան որդիք, հայր՝ մայր խնդրեն, գոց է տուն,
Ո՞վ իրաւունք ունի ըսել ինչ տղուն.
Մէկն հոն կեթայ, մէկն հոս, անդէտ իւր բաղդին,
Քանի՛ չարիք շատ հեղ նոցա դայ դէմին.
Մայրն անպարկեշտ սին հաճոյից ինկած մէջ,
Հաճոյք, որ ո՛չ սահման ունի և ոչ վերջ.
Հայրն մոլի, մօռցած զիւր կին, ու զաւակ,
Զբօսանաց զհետ գնայ շարունակ.
Սէր՝ զոր ուխտեց, նա չյիշեր բնաւին,
Նա սէր ու սիրտ տուած կապրի օտարին.
Զկայ ոչ ուխտ, հաւատարիմ ո՛չ ընկեր,
Եղո՛ւկ, ամէն ոք մէկ զմէկ են խափեր.
Եւ մոլութեան շղթայն զամենք կապած մի,
Դէպի անդիւտ կորուստ առած կը տանի.
Մարդ՝ որ չունի ոչ սիրտ, և ոչ ուղիղ միտք,
Վշտէ 'ի վիշտ վարեն զնա բիւր չարիք՝

Նա հեշտութեամբ թեպէտ կ'ապրի ընդ երկար,
Սակայն ցաւօք հիւծի, վախճանն է թշուառ.
Նոր տարին ի՞նչ, այլ ի՞նչ բերէ այնպիսեաց,
Ոյց սիրտն անարդ, ոգին ու միտք են պղծած։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՂԱՆԴ

Ամէն դէմք ուրախ, ամէն դէմք զուարթ,
Ծաղիկ են գրած կուրծքի գլխի զարդ.
Խուժան վեր 'ի վայր յուզի, կը ծփայ,
Փոխադարձ ողջոյն կ'առնու, ու կուտայ.
Մայր՝ կին ու որդիք՝ նստած պատուհան,
Յուսով կ'սպասեն արանց դալստեան.
Նայիս դեռ արեւ չմտած յիւր մայր,
Փրթին անդիէն մարդիկ անհամար.
Ամենք մէկ 'ի մէկ խառնած կը վազեն,
Դաշկինակ՝ տոպրակ միրգով լեցուն են.
Ամսպէս օրն 'ի բուն գիշերն յառաւօտ
Նստած կ'ըսպասեն նոր օրի կարօտ.
—Ամսօրը—կըսեն—սկիզբն է տարւոյն,
—Ամսօրը նոր կեանք բերէ ամենուն։—
Որպէս թէ ծերերն ալ կառնուն կեանք նոր,
Աշխարհ ամենայն մանկանայ բոլոր.
Ամսպէս նոր տարւոյն գինեաւ դինուցած,
Մարդկային բոլոր սուրբ պարտիք մոռցած,

—Բաբէ՛—կը կանչեն, ամեն կողմ հրճուանք,
Ամէն կողմ պարերգ, ամէն կողմ նուագ.
Հայրը կը խնդայ, մայրը կը բեկրի,
Որդին կը կայտառէ, թէ կաղանդ եկաւ,
Եղբայր եղբօր հետ, ընկեր ընկերի
Աւետիս կուտան, թէ կաղանդ եկաւ։

Ծառայն ի՛ապատէ, որ առնու նուէր,
Չի կըսէ—մեզի նոր կաղանդ եկաւ.—
Կարօտ դասատուն մնայ անհամբեր,
Որ աշակերտն զգայ, թէ կաղանդ եկաւ։

Խեղճ հայ դասատու մ՚ապատէր ընդ վայր,
Որ հայերն յիշեն թէ, կաղանդ եկաւ,
Հայն խօսքով է հայ, իւր պարտուց վճար
Չճանչնար ընաւ, թէ կաղանդ եկաւ։

Խումբ խումբ անէ տուն շրջին բարեկամք,
Միմեանց աւետեն թէ—կաղանդ եկաւ—
Միրդ պնակ պնակ ուտեն ազգականք,
Թէ կեր ու խումի նոր կաղանդ եկաւ։

Կերէք բարեկամք, խմեցէք օղին,
Անուշներ ըլլայ. ձեզ կաղանդ եկաւ,
Բայց երբ սթափիք մօտ երեկոյին,
Ըսէք թէ—մեզմէ տարի մ՚աւ անցաւ։—

ԸՍԻՆ ԹԷ, ԱՇԽԱՐՀ ՊԻՏԻ ԿՈՐԾԱՆԻ

Ըսին այո՛, շատեր ըսին
Թէ, աշխարհիս վերջ պիտի գայ,
Մեծ աստղագէտք հաշուով գտին,
Մի գիսաւոր բերին վկայ.
Յիմարքն զայս լսեց, լացաւ,
Թէ կործանման ժամն հասաւ.
Բայց ինձ չէ վոյթ, մօտէ երբոր
Իմ կործանման ժամն ահաւոր։

Ինքն հայեցաւ երիտասարդ,
Եւ հառաչեց 'ի խոր սրտէն,
Թէ—ամպք մթին զիմ արեւս արդ
Խիստ կանուխէն պիտի ծածկեն.—
Ըսաւ, լացաւ, թէ ի՞նչ օր չար
Պիտի տեսնէր ինք չարաչար.
Բայց ինձ չէ վոյթ, մօտ է երբոր
Արեւս 'ի մուտ իւր սգաւոր։

Աղջիկն յուսով այս սին կեանքին
Կ'ապրէր, և մէն մի ժամերուն
Զհետ գնայր ձայնի սրտին,
'Ւ անուշ անուշ երազներուն.
Զայս գոյժ առաւ, գոյնը նետեց,
Զէռն 'ի ծոցիկ, աչքն արտասուեց,

Բայց ինձ չէ վոյթ, մօտէ երբոր
Հանդերձելոյն յոյս կենաւոր։

Հարան պճնած, և զարդարուն
Առագաստէն դեռ նոր ելած,
Փեսին սիրովը քաղցրաձոյն
Նոր կ'սկսէր վայելք կենաց,
Սակայն ներսէն գնաց արիւն,
Թէ վերջանայ աշխարհ ողջոյն.

Բայց ինձ չէ վոյթ, մօտ է երբոր
Վախճան կենացս իմ անցաւոր։

Հրէ՝ ջրէ՝ մահէ վախցող
Թերեհաւատք գացէ՛ք 'ի բաց,
Ես մահն ու ջուր հուրն իմ անցնող,
Երկրիս խաղերն եղան իմ լաց.
Այլ ինձ չկայ երկիւղ բնաւ,
Թէ կործանի աշխարհ ամբաւ.

Զի ինձ չէ վոյթ, մօտ եմ երբոր
Գերեզմանիս ձգիլ 'ի խոր։

Ո՛ մարդ տխմար, բարոյական
Այս աշխարհիս ոչնչացաւ.
Եւ ներդաշնակ ընկերական
Ծայրէ 'ի ծայր խանգարեցաւ.
Այլ ի՞նչ մնաց, բայց միայն թէ
Երկիր մ'զանգուած տարերքներէ.

Արդ աՀյս է վոյթ, մօտ է երբեր
Ոչինչն յոչինչ դառնալ բոլոր։

Սո՛ւտ է աշխարհ, սո՛ւտ են դարեր,
Սո՛ւտ պատմութիւն, և յիշատակ.
Սոքա չարեաց են գործիներ,
Սովաւ խաբէ զմեզ ժամանակ.
Թէ երբ մեռնիս, օրերդ հատնին,
Այն իսկ է քո վերջ աշխարհին.

Այլ քեզ է փոյթ, մօտ ես երբեր
Տգիտութեան այս վհին խոր։

ՈՐՆ Է ՆՈՐ ՏԱՐԻՆ

Երբ հիւանդն ունի մահաբեր վիճակ,
Ժամէ ժամ կենաց խաւարի լուսնակ.
Որդիքն իւր շուրջ բոլորած՝ նստած,
Գետաբար հոսեն վտակս արտասուաց.

Թէ յայնժամ ասեն եկաւ նոր տարին,
Զէ այն նոր տարի մահամերձ անձին։

Երբ մէկն է աղքատ, կարօտ են որդիք,
Նօթի կը շրջին զորրն յուսալիք,
Մերկ են, ու ցրտէն մին ու դողան,
Կաթոգին խնդրեն մարց գիրկն ապաստան,

Թէ յայնժամ ըսեն եկաւ նոր տարին,
Չէ այն նոր տարի թշուառ տղեկին։

Երբ մարդըն ունի զաւակ սիրասուն,
Մատղաշ հասակով աշխոյժ 'ւ եռանդուն,
Բայց գրիչ ու թուղթ չունի դասագիրք,
Զուրկ 'ի դպրոցէ շրջի թափառիկ,

Երբ դան աւետեն թ'եկաւ նոր տարին,
Չէ այն նոր տարի անուս շրջողին։

Երբ հայը կամ որդի, կամ կին, և կամ այր
Ազգակից ընկեր, կամ երկու եղբայր,
Զունին միմեանց սէր, կռուին անդադար,
Կռիւ, որ քակէ, քանդէ տուն հաղար.

Երբ դան, աւետեն, թ'եկաւ նոր տարին,
Չէ այն նոր տարի մնաւէր անձին։

Երբ մարդն է 'ի բանտ, ոտքերն 'ի շղթայ,
Ուր աղատ կենաց լոյս բնաւ չկայ,
Հեռի՛ հարազատ իւր անէն, հեռի՛,
Սաստիկ կրակով սիրտը կը վառի,

Երբ դան, աւետեն, թ'եկաւ նոր տարին,
Չէ այն նոր տարի բանտարկեալ հիքին։

Երբ մարդն է մոլի, չգիտեր պարտիք,
Ամ անձն, առ Աստուած, առ իւր նմանիք.
Այլ իւր հաճոյից եղած է գերի,
Անդունդ կորստեան ինկած դեգերի.

Երբ գան, աւետեն, թ'եկաւ նոր տարին,
Չէ այն նոր տարի մարդոյ մոլեգին։

Իսկ երբ որ տեսնես դու զհին տարի,
Մի ազգի ցաւեր առնու հետ տանի,
Եւ նոր տարին կեանք բերէ նորագոյն,
Ինչպէս որ դառնայ նոր ծաղկով գարուն,

Երբ գան, աւետեն, թ'եկաւ նոր տարին,
Ողջունէ ուրախ՝ այն է նոր տարին։

ՈՐ ՅՈՒՍՈՎ ՄԵՂԱՆՉԷ, ԱՆՅՈՅՍ ԿՈՐՆՉԻ

Զո՛ւր տեղ հայե՛ր, մեր ժամանակն անցաւ զուր,
Զուր խորհրդով եւ մնացինք օր աւուր.
Հանդէս ըսինք, խնջոյք ըսինք, տօն ըսինք,
Ու մեր ներքին պէտքեր մէկդի ձգեցինք.
Եւ կարծեցինք թէ, կը վազենք դէպի լոյս,
Բայց ո՞ւր է լոյս, կենաց լուսոյ ո՞ւր է յոյս,

Մեր սրտէն յոյս մ'էր թռաւ,
Անթիւ կեանքեր հետ տարաւ։

Զո՛ւր տեղ առինք մեզ օրինակ Եւրոպան,
Ուր շատ տներ՝ տեղեր քակեց իւր մօտան.
Ազատ ազգաց թողինք դործերը վսեմ,
Եւ մոլութեանց զհետ գացինք անխոհեմ,

Որ այն եկաւ, մեր աներուն մտաւ մէջ,
Վառեց, մոխրեց ինչպէս կրակ մի անշէջ.
Եւ յաւերակս Հայկական
Դառն ողբեր շառաչան։

Ի զո՜ւր աւաղ, զմեզ դրինք բանի տեղ,
Մօռանալով Տգիտութիւն մեր ահեղ.
Եւ աշխարհի դէմն ելանք մեք 'ի տես
Հարուստ, գիտուն, քաղաքագէտ անձի պէս.
Եւ խաբեցին, ու խաբուեցանք չարաչար,
Մենք մեր չարեաց եղանք մեք ինքն պատճառ.
Եւ ճակատուց մեր վրան
Նոր նոր արատ աւելցան։

Ի զո՜ւր ելանք հպարտ հպարտ պարծեցանք,
Թէ մեք ունիմք օրէնք՝ ժողով մեզ վրկանք.
Եւ բառ գրոց մէջ որչափ կար դիւթական
Փայլուն բառեր, զայն ժողովեցինք ամենայն,
Եւ սին յուսով ընինք շատ ճառ, ու շատ երգ,
Ազգասիրի լաւ դերարան մ'եղանք մեք,
Բայց վարագոյրն երբ ինչաւ,
Երգը լացի փոխուեցաւ։

Ի զո՜ւր մեր մէջ մեք մնուցինք ընդ երկար
Ազատութեան խղճն ու կրակ բոցավառ,
Ազատութիւն բաժինը չէ տգիտին,
Չի տգէտներ միշտ խնամոց կարօտին.
Մեղք չէ՞ր ուրեմն, զոր ունէինք, թողաք զայն,
Եւ ստուէրին զհետ գացինք ընդունայն.

Եւ բարւոյն տեղ բերինք չար,
Զաղգ մի ըրինք վշտահար։

Զո՛ւր կարծեցինք թէ, քուրդն է մեր թշնամին,
Զո՛ւր քաջութեան անուն տուինք տկարին,
Զո՛ւր դոչեցինք թէ, այս ոք է, կամ այն ոք,
Զի յօտարաց ինչաս ըրած չէ մեզ ոք.
Մեր թշնամին. մեր տնաւէրն է միայն
Տգիտութիւն Աղքատութիւնը միայն
Ով որ չունի սիրտ ու միտք.
Այն չունի ազգ. հայ ենիք,

Բաւ խորութիւն դրինք 'ի մէջ մեր եղբարց
Մէկ հայրենեաց, և մէկ ազգի զաւակաց
ՀՌՈՄԳԷԱԿԱՆ՝ ԲՈՂՈՔԱԿԱՆ՝ ԵՂԲԱՐՔ ԵՆ,
Մեզ պէս նոքա հայու արիւն կը կրեն,
Դոքա եղբարք են, դոքա հայր. մայր ու քոյր
Դոցա սիրոյ եղբայրական տուր համբոյր.
Զի այլ կրօնք. այլ է ազգ,
Սակայն եղբայր չէ այլազգ։

Հեռի՛ ուրեմն հեռի՛ 'ի սուտ երազոց,
Որք ազբիւր են անվիւ վշտաց՝ ու ոլբոց.
Դառնամք 'ի սէր, դառնամք 'ի գործ միութեան,
Ի խաւարէ. դառնամք 'ի լոյս դիտութեան.
Զի ասկէ զատ մեզ ճշմարիտ չկայ կեանք,
Այս մեր միայն սրբազան պարտք ու պարծանք.

Ա.յսպէս ապրինք տաճկաց դթոտ թեւին տակ
Յոր հինգ վեց դար գտանք հանդիստ շարունակ ,
Ապա թէ ոչ հանդէս՝ երդ ,
Լինին շիրմաց մեր ողբերդ ։

ՊԱՆԴՈՒԽՏ

ՋՕԵ

ԱՌ ՀՈԳԵԽՕՍՆ ՀԱՅ ՄՈՒՍԱՅՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ՍՐԱՆՑԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆ

ԵՒ

ՆԱԽՈՐԴ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՅ

Ո՛ հայր գիտես, թէ զի՞նչ է սէր,
Զ՞ինչ համակրանք են գեղեցիկ,
Քանի՛ պարտիք դրեն աստղեր
Մարդոյ զգալ զԱզգ՝ Հայրենիք։

Որ բարեկամն ես Հոմերին,
Եւ ճանաչես զՎիրգիլիոս,
Ընդ քեզ խօսի յար լամառթին,
Եւ մտերիմդ է Ովիէոս։

Եւ բնութեան գիտես լեզու,
Քեզ հրապոյր չէ իսկ արժան.

Ունիս 'ի քեզ զսիրարկու
Զայն հրաշալից անմահութեան ։

Ուստի մնայ ինձ անտխեղծ
Պատկ գլխոյդ տալ վեհապանծ ,
Զայս խուն վասատակ իմ բանաստեղծ՝
Զերթ մի ծաղիկ 'ի բիւր ծաղկանց՝

Զի խօսեցի ասա հայկական
Այս իմ քնար եռանդագին
զԱնուն Հայրիկ Զեր Խրիմեան,
Յորչափ արեւ չափէ զերկին ։

ՀԱՌԱՋԱՆՔ ՊԱՆԴԽՏԻՆ
Ի ՆՈՐ ՏԱՐԻՆ

Այգուն այգուն երբ ամէն ոք արթննայ,
Իւրաքանչիւրն դէպի իւր գործ կ'ընթանայ .
Եւ մին անդին խորհի թէ , ի՞նչ հաճոյք նոր
Գանէ , որ հեշտ անցնին ժամերը բոլոր .
Այլուր խաւար մութ սենեկի մէջ խոնաւ
Մէկը նստած՝ սաստիկ վշտաց կրէ ցաւ .
Խուլ հառաչանք մը դուրս կուգայ ժամէ ժամ ,
Զեն դիմանար անոր ժայռերը անդամ ,
—Ա՛հ , ի՞նչ էի—կըսէ , և —ի՞նչ եմ հիմիկ ,
Ոչ ընտանիք քովս է , և ոչ սիրելիք ,
Ոչ լոյս ունիմ, և ոչ լուսոյ չունիմ յոյս ,
Խաւարին մէջ կամ կորնչիլ ապայոյս .
Ամեն առաւ երբ հայրենեաց արշալոյս
Խնդրեմ տեսնել , բանալ զաչերս իմ 'ի լոյս ,
Ի զո՞ւր հայիմ դէպի արեւն ամպամած ,
Որ կը ծագէր իմ տան վերայ բարձրացած .
Ի զո՞ւր , աւա՜ղ ծաղկանց մշոյ դաշտերուն ,
Մշոյ ծառին , կանաչագեղ խոտերուն ,
Մշոյ անուշ ջրին կրեմ հոս կարօտ ,
Եւ կ'երազեմ զանոնք մինչեւ առաւօտ .
Բաբէ՛ , կարօտ հովին , կարօտ և հողին ,
Կարօտ աստեղց , մեամ կարօտ իւր լուսնին .

Ասուած իմ ցե՞ր պիտի մնամ ես այսպէս,
Օտարութեան մէջ տառապիլ դառնապէս.
Ցե՞ր այս հառաչք պիտի չերթան սրտէս բաց,
Ե՞ր, ե՞ր պիտի դադրին եղերգս այս լալեաց.
Ո՛վ տէր ահա՛ յինէն տարի մ՚ալ անցաւ,
Դեռ չտեսայ ես օր մի, ժամ մի անցաւ.
«Նոր ամ եկաւ» ըսին, աշխարհ կը հրճուի,
Սակայն ինձմէ սուգ և արձունք չպակսի.
Զի չբացաւ գեղեցիկ այդ մ՚իմ դլխիս,
Դեռ մի անուշ հով չփչեց երեսիս։

Տեսնեմ, թռչունք երամ երամ երդ 'ի ձայն,
Կուգան, կանցնին, դէպի յարեւ կընթանան.
Ամենքն 'ի տուն կերթան, ամենքը 'ի բոյն,
Ի հայրենիս դառնալ ի՞նչ քաղցր՝ ու սիրուն։

Տեսի, անցաւ կռունկ՝ ընկեր պանդխտին,
Սակայն չեկաւ առնուլ բարեւս իմ յետին.
Տալ սիրելեացս, որոց տեսոյն յարաժամ
Վա՜հ, շատ ամաց հետէ կարօտ կը մնամ.
Ի՞նչ անողոք ճակատագիր, որ այսպէս,
Անօգնական կը տառապիմ վշտակէզ.
Ոչ հովանի ինձ ծառն ընդդէմ արեւին,
Ոչ զովութիւն տայ սրտիս ջուրն առուակին.
Ինձ մարդ՝ թռչուն, գոնէ գազանք չեն ընկեր,
Զունիմ զարեւ յերկինս, լուսին և աստղեր.
Երթուանքս 'ի բոց, հոգիս 'ի կոծ ողբաձայն
Վառիմ, մլկիմ, սիրտս է սիրոյ վառարան.

Ոչ ոք չըսաւ թէ , ներսէս ի՞նչ է այն ծուխ,
Որ ժամէ ժամ 'ի դուրս կ՝ելնէ թուխ առ թուխ .
Ոչ ոք չզգաց , թէ Հայը մի եմ որդեկաց ,
Հօր՝ մօր՝ կնոջ՝ որդւոց սիրով բռնկած .
Ոչ ոք աւա՛զ չեռեաս արցունքն աչքերուս ,
Զոր անդադար լալով թափեմ մինչ 'ի լոյս .
Անգո՛ւթ մարդիկ , զիս մերժեցին չեկան տես ,
Ոչ ոք հարցուց, -պանդուխտ մեռա՞ծ, թէ ողջ ես.-

Ամենքն յինէն հեռի՛ , հեռի խորշեցան ,
Դեռ չյիշեց զիս գթութիւն Աստուածեան .
Ո՛վ դու հզօր կարողութիւն անսահման ,
Ո՛վ մշտաբուղխ աղբիւր սիրոյ գթութեան.
Դարձի՛ր , հայէ՛ , տե՛ս , այս ճեռայդ արարած
Քանի հազար ցաւոց տակ կայ ընկճուած .
Ինքն հոս դերի ինկած բաղդին անողորմ.
Եւ հոն իւր տուն հեծէ ցաւոց մէջ ողորմ,
Մինչ եօթն արեւ մահու ամպոց տակ մթին
Մի զմիոյ կնի անպարտ շինչանին .
Մեզ սիրտ տուիր , որ մեր սիրոյն դերե՞զման
Ըլլայ , և հոն թաղուիմք տենչիւ սրբազան .
Կամ պարտքն անձին մէջ հո՞ւր դրիր դժոխոց ,
Որ ճարակէ կեանք և հոգի իբր 'ի բոց .
Գթա՛ ո՛վ տէր , կամ ա՛ռ հոգի պատդխտին ,
Կամ տուր արեւ աչաց տեսնել սիրելին .
Կամ դիւրացդած անձը փոխէ . մանաւանդ
Տո՛ւր երկաթէ մարմին , կամ սիրտ աղացմանդ ,

Յայնժամ թերեւս նա տանի խիստ վշտաց
Զերթ քարաժայռ, որ կը տոկայ դէմ ալեաց։
Տան ձմեռ անցաւ, չեկաւ դեռ գարուն,
Դեռ չտեսի երկինքը պարզ շողշողուն.
Ո՞հ ի՞նչ ընեմ, ո՞ւր դիմեմ, ի՞նչ է այս Տէ՛ր,
Խուլ է ձայնիս մարդ՝ հրեշտակ, ու երթեր.
Մոլորաքայլ ինկած շրջիմ վայրէ վայր,
Զդիտեմ. ո՞ւր է ընդ երեկն իմ դադար.
Մերթ յեց 'ի քար նստիմ յեղերքս ծովին,
Հանդէպ լուսնի մնամ յուսով քաղցրադին,
Որ հողմ չնչէ, ալեակ շարժի, գան 'ի բան,
Ինձ աւետեն թէ — ողջ է տուն քո համայն—.
Եւ մերթ դլուխս առնում, դնամ խոր անտառ,
Ուր կը հանդչին անթիւ թռչունք թառ 'ի թառ.
Որ հարցանեմ, թերեւս անոնք տան մի լուր,
Զի կը շրջին ծով ու ցամաք ընդհանուր.
Թերեւս օր մը՝ երբ դրախտին դէպի սար
Ճռվռալով՝ երգով դացին սրավար,
Մեր խրճիթին քովէն անցան, ու տեսան
Իմ Թուրվանտան, Մարթան, Պետոն սիրական,
Որ մերկ մարմնով՝ ու բոկ ոտքով թեւաքաց
Դրանս առջեւ խաղան, անդէտ իմ չարեաց.
Կամ ծերունի մայրս ու հայրիկ քովէ քով,
Եւ իմն ընկեր, ընդ որ կապուած եմ սիրով,
Նստած հային դէպի 'ի սարն, յոյր վերայ
Յետին ողջոյնս լալով տուի, հեռացայ,

Զոր ես քանի՛ յիշեմ, այնքան մորմոքի
Սիրտս, իբրեւ ծով ալեծուփ կը ծփի.
Ա՛հ թէ կըսեմ, ձայն մ՚ինձ ըսեր, — ո՛ղջ են,
ողջ, —
—Ամենքն առողջ են, և ամենք քաջառողջ. —
Յայնժամ երկար քաշէի շունչ մի միակ,
Պահ մը պակսէր յինէն ցաւոյս յիշատակ.
Թէ ոչ, ինձ բանտ, կամ գերեզման, կամ աքսոր
Քան զայս հազար անգամ է կեանք փառաւոր։
Անէ՛ծք օրին պանդխտութեան, անէ՛ծք բիւր,
Որ հայրն յորդւոյ, կինն յառնէ տայ թափուր.
Պանդխտութիւն աղբիւր չարեաց է հազար,
Զի այլ արեւ օտար մարդոյ լոյս չտար.
Բաբէ՛. միշտ վատ է այնպիսին ամեն տեղ,
Ոյր քով հաւասար է օտարին, և իւր տեղ.
Վատ, որ զիւրն թողած այլուս ցանկանայ,
Վատ, որ պարտիք և ընտանիք մոռանայ.
Աղքատութիւն քաղցր է իմ տան մէջ բնիկ,
Քան օտարին կեանքն. ու բաղդ դեղեցիկ.
Զի չիք սիրուն քան հող, յորում ծնաւ մարդ,
Չէ քան խրճիթ արքայական մեծ պալատ.
Ոչ քան զչոր հացիկ չէ՛ քաղցր բնաւին
Բաղմատեսակ ուտեստ այլոց սեղանին.
Ուր սէր անբիծ, և կեանք խաղաղ հովուական,
Անդ է կենաց երջանկութիւն պատուական.
Աստուած ու տուն հայրենիք երք են երեք,

Սիրել, պահել. . . . . պարտիք են երեք.
Երնէկ օրին, յոր տայ Աստուած պանդխտին
Որդւովքն հանդերձ այսպէս ուծնել նոր տարին։

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԱՌ ՊԱՆԴՈՒԽՏՆ

Պանդո՛ւխտ, պանդուխտ, ձգէ՛ խորշեր պանդոկաց
Խորշեր, յոր օր օրի նիւթեա մահ կենաց.
Բաղդըն 'ի քէն հեռի փախչի, դու առ այն
Ի՞նչ կը վազես շարժեալ յուսով ընդունայն.
Բաւ հեռամուտ խաւարին մէջ լանդրես լոյս,
Խաւարին մէջ կենաց լուսոյ չըլլար յոյս,
Ոչ 'ի Հիւսիս, ոչ 'ի հարաւ, ոչ այլուր
Քեզ պարտաւոր չէ ոք տալ հաց, և ոչ ջուր.
Զէ հարազատ այլ մարդ, կամ կին, կամ տղայ,
Քո հարազատն 'ի հայրենիս քեզ մնայ.
Զեն կենաւոր, քեզ այլ երգեր, ու ծաղիկ,
Որչափ վսեմ ըլլան, որչափ գեղեցիկ
Զե՛ն, չեն անուշ քեզ ճաւողիւնք թռչնեկաց
Քան զկարօտ ձայնիկ քոյոց սիրելեաց.
Որոնք քանի արեւ ծագէ, կը հային
Անձկակարօտ դէպի չորս կողմն աշխարհին.
Եւ յոյս 'ի սիրտ եղբայր ու քոյր քով 'ի քով
Մին միւսին կըսէ լալով, ողբալով.
«Ա՜հ, ե՞րբ արդեօք պիտի տեսնեմք զուարթերես

« Մեր սիրելի և անուշիկ հօրն երես .
« Ա՛հ ե՞լբ արդեօք ձի մը հեծած սրավար
« Պիտի ինչնայ սա դիմացի լեռնէն վար .
« Ուր որ երբեմն զմեզ սիրեց , համբուրեց ,
« Մէկս սեղմեց , մեկս գրկեց հառաչեց .
« Բոց մը կարծես սրտէն ելաւ նոյն ժամին ,
« Աչքն 'ի յերկինս դարձուց , գնաց վշտագին։ »
Լսէ՛ պանդուխտ քո զաւակաց ձայներուն ,
Որոնք գիշերն 'ի բուն կողքան օրն 'ի բուն .
Եւ անդադար աչեր թափեն ջերմ վտակ ,
Հառաչանքներ կը խղթուին խրճթին տակ .
Ուր արեւու ճեռք չհանի լուսաւոր ,
Ուր կեանք չկայ , պակսի ամէն ինչ բոլոր ,
Ներսն անօթի , դուրս ելնելու չեն աղատ ,
Այն դերեզման մ'է թշուառաց յուսահատ .
Լսէ և ձայն քո խեղճ կնոջ ցաւալի ,
Որ երբ ամէն առաւս յաղթիս կայնի ,
Ի ծունր իջած , աչք յարտասուս, շուրթն 'ի լայ,
Բազկատարած կը պաղատի առ Աստուած .
Նուաղ ձայնիւ միշտ կը խնդրէ թէ—երկինք
Տո՛ւր իմ փեսան, կամ տո՛ւր մեզ մահ, փրկուինք ։
Ապա կենէ , տուն կը դառնայ յուսահատ ,
Ի հող նստած դլուխ դրած յեց 'ի պատ ,
Հեծէ , կուլայ , և սրտաբէկ լսին ձայնք ,
Ժայռեր 'ի գուլթ շարժին , կուտան արձագանք.
Թշուա՛ռ կնիկ , սեւը գլխին , սուգ սրտին ,

Դրած հալի, մաշի սիրովը քոյին,
Հողմին «կեցի՛ր» կըսէ, թռչնոյն «եկուր մօտ,
« Ձեզ հետ առէ՛ք, տարէ՛ք բարեւս ու կարօտ,
« Իմ վեհային տուէ՛ք, ըսէ՛ք թէ, ես հոս
«Ողբովքս հանդերձ արցունք թափեմ դառնահոս.
« Մին հարուածէ զմեզ, միւս վարէ քարշ,
« Ձեմ դիմանար այս վիճակիս աղէքարշ.
« Հարցէք թէ, ի՞նչ, օտարութեան մէջ ի՞նչ կայ,
« Որ հոն գնայ, և այլ առ մեզ չդառնայ.
« Հարստութի՞ւն ինկած խնդրէ ընդ երկար,
« Կամ փառք, և կամ պատի՞ւ յաշխարհս օտար.
« Ասոնք կըլլան, թէ ոք ունի արժանիք,
« Անարժանին այս երազներն են չարիք.
« Որ դիտութիւն արհեստ չունի, նա կըլլայ
« Կամ բեռնակիր, կամ գործաւոր կամ ծառայ.
« Լա՞ւ են ասոնք քան զերկրագործ զմշակ,
« Կամ շահաւո՞ր քան զայն բերին զվաստակ,
« Որ եղն՝ արոր, արդար վաստակ իւր ձգեց,
« Եւ կեանքն ազատ ծառայութեան վերածեց.
« Ո՛չ, ո՛չ, այլ սին յուսոյ զհետ ինկած ո՛հ
« Կորիճ հասակ իւր կը մատնէ մահուան զոհ.
« Ըսէ՛ք, թող մէկ մը ձեռք դնէ իւր ճակտին,
« Հաշուէ, թէ ինչ շահ եղաւ տան տարին,
« Պարտք ունէինք, ու պարտքերնիս շատացաւ,
« Եւ օր օրի անթիւ ցաւեր աւելցաւ.
« Այլ ի՞նչ օգուտ, ո՞ւմ կապասէ, ո՞ւր է շահ,

« Որ այս խելքով մենք ցիրուցան եղանք, վա՜հ.
« Ձեռք համբուրեմ, ոտք համբուրեմ իմ էրկան,
« Թող Աստուծոյ սիրոյն դթա՛ մեր վրան,
« Ես զարդարուն լաթ չեմ ուզեր, այլ ինձ բա՛ւ
« Է մերկութիւնս պատիւ ծածկող պարզ կտաւ.
« Ինձի պէտք չէ տեսակ տեսակ կերակուր,
« Այլ շատ իսկ է միայն լոկ հաց, լոկ ապուր.
« Եւ ոչ բնաւ խնդրեմ հանդիսատ, կամ հրճուանք,
« Իւր սէր մեծ է քան զամենայն զբօսանք։
« Այսպէս ասէ՛ք իրեն, խղճով թող խորհի
« Վերջին խնդիր իւր հարազատ ընկերի.
« Որ զինք սիրեց այսչափ ցաւոց մէջ կարօտ,
« Եւ դեռ սիրէ, մինչեւ մահուան երթայ մօտ.
« Զայս որ ասէ թող չկենայ, դայ փութով,
« Իսկ թ'ուշանայ, զմեզ գտնէ ընդ հողով.
« Եւ թող յայնժամ դայ, ողբ կարդայ մեր դէմին
« Վրայ, թէ հոս կան անարեւ վեցիքին՝
« Հայրըս ու մայրս, և կինս, երեք և որդիք
« Հոս անխնամ վա՜հ կան թաղուած եղկելիք.
« Յայնժամ թող դայ լուսին, և խումբ աստեղաց
« Լան թէ, ծածկին աստ սիրտ ու սէր թշուառաց.
« Արդ թէ զմեզ այլ եւս երկար մնառանայ,
« Եւ կամ արտիկը քար դառնայ, չիմանայ,
« Դառս Աստուծոյ թողում, ու սէրս այլ իրեն,
« Ցաւօք մեռնիմ, գնամ վշտաց այս հովտէն,
« Այլ ի՞նչ է սէր, այլ ի՞նչ է պարտք, ի՞նչ է կեանք,

« Երբ վերջապէս հողն է հիքին ափոփանք ։ »
Այսպէս կերգէ գլխիկն 'ի վայր, ձեռք 'ի գիրկ ,
Սրտին վրայ առած՝ սեղմէ գիւր որդիք .
« Ա՛հ , 'տի մեռնիմք » կըսեն ամէնքն ողբագին,
Այս խղճալի ձայներ յերկինս կը հասնին .
Լսէ պանդուխտ, Աստուած հրեշտակ կան վկայ,
Քան զայս եւեթ անդթութիւն ո՞ւր տեղ կայ ,
Որ զընտանիս թողուս կարօտ ու վինակ ,
Եւ հայրենի հողդ ձգես անմշակ ,
Եւ թափառիս անդ , ուր չունիս բնաւին
Ոչ գործ , ոչ շահ , և ոչ դէթ թիզ մի գետին .
Դարձի՛ր պանդուխտ, դարձիր, 'ի քո հայրենիք ,
Պանդխտութիւն կարօտութիւն ալ հերի՛ք .
Հերիք զաւակ կ'ին հայր ու մայր աղդական
Մե՛ղք են , այլ բա՛ւ քո կարօտով վերջանան .
Դարձի՛ր 'ի քո երկիր , ոյր հողն արդաւանդ ,
Ջուրն է անուշ , օդն է առողջ , կեանքն է անդ.
Գնա՛ , որ զքեզ Աստուած օրհնէ , ու աճիք ,
Թէ ոչ , անէ՛ծք քեզի , ու հազար բի՛ւր չարիք ։

ԱՆՈՒՐՋԲ ԽՂՃԱՀԱՐ ՊԱՆԴԽՏԻՆ

Ի ԺԱՄ ՄԱՀՈՒ

Կեցէ՛ք, պանդուխտ հոլեր կեցէ՛ք,
Որ յԱրևելս կը շնչէք.
Կեցէք, և իմ նուաղ ձայնիկ
Ասէ՛ք, տարէ՛ք 'ի հայրենիք.
Եւ երբ անցնիք Աշոյ դաշտէն,
Զոր մարդ՝ ծաղիկ՝ հասկ կը ծածկեն.
Փոքրիկ լերան մը քով շինած
Խրճիթ մը կայ մամռոտ պատած.
Հոն շնչեցէ՛ք պահ մը մեղմով,
Տնակս է այն սիրագորով.
Ասէ՛ք հօրկանս՝ մօրկանս ըսէ՛ք,
Որդւոյ, ինձմէ պատմեցէք,
Թէ ձեր որդին, ձեր այրն՝ ու հայր
Անուշ սիրով ձեր տանչի յար.
Ասէ՛ք, ինկած անօգնականն
Մի պանդոխի խորը միայն,
Հիւանդ հեծէ մէջ անկողնին,
Զունի լսող իրեն ձայնին.
Կարոտ մը դեղ, քիչ մը ապուր
Զունի տուող պակիկ մը ջուր.
Եւ երբ 'ի մէջ խոր դիշերին
Երկնից կանթեղքը կը մարին,

Զանի կանթեղ, կայ մթապատ,
Տղու նման լայ յուսահատ.
Քանի որ ա՛խ քաշէ, սրտէն,
Բոց ու կրակ դուրս կը ցայտեն.
Ըսէ՛ք, թող գան, ալ չկենան,
Աչքս շրջած՝ հայիմ ճամբան.
Կ'երդուցնեմ զձեզ յԱստուած,
Զըլլայ մոռնաք իմ այս հայցուած։

Փա՛ռք Աստուծոյ ահա կուգայ,
Կարծես նոր կեանք բերէ ընծայ.
Ա՛հա, խեղճ կինը շնչասպառ,
Մազեր թափած ուսերէն վար,
Ծով ծով քրտինք ճակտին վրայ,
Թեթեւ արծուի պէս խոյանայ.
Ո՜հ, ի՞նչ անուշ է սէրը որ,
Տկար կնիկ մը՝ հեռաւոր
Երկրէ յերկիր յօտարութիւն
Ելեր կուգայ քաջի հանդոյն.
«Ա՛հ, ո՞ւր ես դու, ո՞ւր մնացիր,
Սիրո՛ւն ընկեր արի՛, հասի՛ր.
Ե՛կ, ու դարման ըրէ ցաւիս,
Եւ կամ դու ա՛ռ անուշ հոգիս.
Վազէ՛, վազէ՛, սիրոս մարի,
Հոգիս կարծես իմ կը քաշուի.
Վազէ՛, գնա՛ յԱստուածամայր,
Եւ աղաչէ զվանահայր,

Թող խաչ մասունք առնէ, ու գայ,
Քիչ մը գլխուս վրայ կարդայ.
Իր սուրբ աղօթք, և իմ հաւատք
Յուսամ անձիս բերեն փրկանք.
Քանզի հաւատքն է լոյս վերջին,
Որ կը ծագէ մեղաւորին։

Ա՜հ, ի՞նչ կըլլամ, ներսս կերի,
Ա՛յի՛, Շուշան, արի՛, արի՛.
Գնա՛ շուտով քիչ մը պաղ ջուր
Սուրբ Յակոբէն բե՛ր, ինձ հասուր.
Կղզամ որ յիս հուր դժոխոց
Լեցաւ, բերնէս դուրս կուգայ բոց.
Կը բռնկիմ, դառնամ յաւէր,
Չիս պաշարեն մահուան ցաւեր.
Խարիպ մի եմ, չունիմ մայրիկ,
Կամ քոյր՝ եղբայր, կամ սիրելիք,
Վերը Աստուած, ու հոս դու ես,
Քովս է՛կուր թ'Աստուած սիրես։
Եւ ո՞ւր, ինչո՞ւ երեսդ անդին
Կը դարձնես, ո՛վ անգութ կին.
Գէթ մէկ մը քովս եկուր, որ քեզ
Համբոյր մի տամ կարօտ սրտէս,
Խօսէ՛, մէկ մ'ալ լսեմ քո ձայն,
Ապա մոնեմ 'ի գերեզման.
Չկրտե՞ս, որ երբ մենք այն տարին
Սէր մէկ մէկու տուաք սրտին,

Յայնժամ եկաւ մեր տէրպապան՝
Զեռքը սուրբ Խաչ Աւետարան,
Կարդաց, օրհնեց, ու պատկեց,
Երկուքս ալ մէկ կապով կապեց.
Յիշե՞ս, տուաւ մեզ մեծ պատուէր,
Որ մէկ մէկու պահեմք միշտ սէր.
Եւ օդնական ըլլանք միմեանց
Ամեն ցաւոց մէջ, և վշտաց.
Ընկերական այս էր պայման,
Այս է և կեանքն ամուսնութեան.
Պատուէր տուաւ, մէկ տեղ ապրինք,
Իսկի միմեանց չբաժնուինք.
Այս պայմանին ներկայ էին
Արդն յերկրի, Աստուած յերկին.
Յայնժամ սիրով ընդունեցիր,
Հլու մնալ ինձ ուխտեցիր.
Ի՞նչու ուրեմն անգութ ընկեր
Այս սրբազան ուխտս մոռացեր,
Եւ դիս հիմայ դլխիկս 'ի բարձ.
Թողած, հեռի կերթաս 'ի բաց։
Ահ, սէր, կարօտ, կրակ, ու ցաւ
Զորան ալ մէկտեղ սիրաս լեցաւ.
Եւ ո՞ւր դացիր, ո՞ւր ես Տուշան.
Մթնեց աչքերս ալ չտեսնան.
Տուշան . . . ո՜հ. ո՞վ է այն խոժոռ,
Պեխերն ըրած ոլոր ոլոր,

Դահճի նման աչք արիւնոտ
Դէմս կեցած հայի ցասկոտ.
—Սրի՛—կըսէ, 'ւ անձս դողով
Լնու մահուան ցաւրտ քրտինքով.
Կըսէ, ու զիս վարէ խակոյն
Մի լերին ծայրը բարձրագոյն,
Անգթաբար ձգել 'ի վայր,
Ուր հուր՝ ծծումբ կայ խուռն վառ.
Սոսկումն պատեց անձս բոլոր,
Գալարէի դլոր մլոր.
Եւ այլ յայլմէ եղած աւա՜ղ,
Լքայ, կայի սիրտ 'ի նուապ.
Չէի մեռեալ, ոչ կենդանի,
Այլ ինչ ըլլալս չգիտէի.
Սակայն գիտցայ թէ Աստուած էր,
Որ 'ի տանջանս զիս կը կանչէր.
Գիտցայ, այս էր վախճան կենաց,
Թէ երջանկաց, թէ թշուառաց.
Այս էր վախճան հէք մահացուին,
Պանդխտութեանս դառն բաժին.
Մահն ազատ, մարդն է գերի,
Ուստի խուսել հնար չունի.
Ո՜հ, նոյն ժամին աչքիս առաջ
Մեղքս մէկ մէկ եկան յառաջ.
Բայց քան զամէն մեղքերս մեծ
Մեղք մ'ունէի, զիս շատ տանջեց.

Անդ յիշեցի, թէ կին զաւակ
Թողի կարօտ, 'և անտէր մինակ,
Հեռի գացի տարիներով,
Ու չդարձայ խեղճերուն քով.
Զոր տանջեցին, անարդեցին,
Սիրտք սդացին, աչեր լացին.
Հէքք չունին տէր տիրական.
Անգութ բաղդին զոհ պիտ'ըլլան.
Էին, և են միշտ անարեւ,
Մահն է բաժին այսուհետեւ.
Կ'ուզեմ ունենալ, կեանք չվարել
Է կենդանւոյն լինել մեռել.
Սա ասողերուն արդեօք ներքեւ
Կա՞յ մեծ քան զայս մեղք մ'արդարեւ.
Որ իբրեւ սուր ամեն վայրկեան
Յօշ յօշ ճմլեց աշիքս համան.
Ոչ դուլ տուաւ, և ոչ դադար,
Ու միշտ տանջեց զիս չարաչար.
Գիտեմ, գիտեմ, զիմ դերեզմանդ
'Տի խառվէ այս տխուր ձայն.
Մինչեւ ելնէ ինձ հետ յերկին
ՅԱթոռ անմահ դատաւորին,
Ընել զինէն հգօր բողոք,
Որ զիս վառեն անգութ դժոխք.
Ա՛հ. որպիսի դառն վճիռ
Երկինք դրած է վշտակիր.

Մարդ որ տիրոջ պատկերն ունի,
Մա՞րմնի ինչ իցէ, կամ արժանի,
Սրարած վերհ և գերագոյն
Սյսպէս յանարդ վոխել 'ի գոյն։

Անէ՛ծք օրին, յոր թոռի հերկս ու արոր,
Զայդի՝ պարտէզ, և իմ արտերքս բոլոր.
Պանդխտեցայ, շահու յուսով ընդունայն,
Զանքս 'ի զուր անցաւ, ու կեանքս ամենայն.
Մերթ տխրեցայ՝ մերթ լացի, մերթ յուսացի,
Մինչեւ արեւս յօտար երկիր մարեցի.
Սա՛ղ եղայ ես անզդայ կեանքիս մէջ,
Ես իմ ձեռօք յիս վառեցի հուր անշէջ.
Եւ բնութեան արդար ձայնին չ'անսացի,
Խաւարն աչքիս, մեղքը ճառկիս գրեցի.
Թոռ դժոխոց հուր զիս վառէ բոցակէզ,
Զ'իմ կենաց մէջ եօթն մեծ մեղք ըրի ես.
Հայր՝ մայր ու կին, ես և երեք իմ որդի
Անզթաբար մահուան ցաւոց մատնեցի.
Սյո՛ դիտեմ թ'Աստուած արդար
Հատուցանէ ընդ չարին չար,
Եւ իմ մեղաց փոխան պիտի
Տայ անշէջ հուրն յաւիտենի,
Արժա՛ն է ինձ. սակայն ով աէ՛ր
Ասէ ձայնիս, որ գայ 'ի վեր,

Թող մի վայրկեան զաւակս ու կին
Տեսնեմ, համբոյր տամ սրտագին.
Խնդրեմ հօր մօրըս խանդակաթ .
Հելայ ընեն իմ կերած կաթ ,
Հէլայ ընեն հայն ու ջրիկ ,
Զոր ինձ տուաւ քաղցր հայրենիք .
Թող որ , մէկմ՚ալ գրկեմ սիրով
Սրտիս անուշ կարօտներով ,
Գրկեմ, սրտով—մեղա՛յ—դոչեմ,
Գուցէ զայս մեղք թեթեւցնեմ.
Ապա ծածկիմ սեւ հողին տակ ,
Հէք պանդխտին այս է բաժակ ։ »
Ս.յսպէս հեծեց , այսպէս լացաւ,
Ս.ջին արցունք աղբիւր դարձաւ ,
Խե՛ղճ մայրդ երեք անգամ աչեր
Նուաղ բացաւ , ու շուրջ հայէր ,
Հուսկ երկար հեւք մ՚անցաւ սրտէն ,
Արիւն յերակս կեցաւ անդէն .
Մէկ մ՚ալ զաւակ՝ ու կին գոչեց ,
—Հա՛յր , մա՛յր—ըսաւ , աչեր դոցեց .
Ս.յսպէս իւր տուն հոն յուսահատ ,
Ինք ծածկեցաւ սատ հողին տակ.
Ալ ո՛վ պիտի լայ դառնագին
Մարած արեւը պանդխտին ,
Որ քառասուն տարուան օրեր
Զունեցաւ օր մի լուսաբեր .
Ս.յլ թուխ ամպոց տակ թանձրամած

Տիկնաւ, յերկինս մնաւ անդարձ։
Թէ երբ շնչեն այգուն հովերը
Սրեւելեան դէպի սարերը,
Գերեզմանէն այս թշուառին,
Թոյլ թեւերով թող գան, անցնին,
Եւ հեռ առնուն տանին միակ
Անգթութեան այս յիշատակ.
Եւ մեծաձայն հռչակ կարդան
Տիեզերաց այս ամենայն,
—Թէ մօռացաւ զիւր պարտք և սէր,
Սատ 'ի գժոխս ինչաւ պանդուխտ։—

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՆ ԱՌ ՊԱՆԴՈՒԽՏ

Պանդո՛ւխտ, այդ սիրտ ապառաժէ՞ն վոխ առիր,
Ուր ղդայումն չիք բնաւ.
Կամ հարազատ զարիւն զոգի՞ կորուսիր,
Մեղքիդ չունի՞ս ապաշաւ.
Մանկիկ մատաղ, հարան պարկեշտ, ծնողք ծեր,
Մինակ թողիր, հեռացար,
Այս տասն ամ է, որ դու հոս ինաս դեռ,
Եւ անոնց քով չդարձար.
Սատուած զքեզ այն խեղճերուն դրաւ տէր,
Որ խնամես, ու ապրին,

Իսկ դու ի՞նչու զանոնք կարօտ ու անտէր
Թողեր երես 'ի գետին.
Շուրջդ նայէ՛, տե՛ս թէ, ամեն քեզ նմանք
Ի՞նչ հոգ տանին ընտանեաց,
Տե՛ս թէ, մինչեւ անգամ թռչունք ու գազանք
Ինչպէս գթան զաւակաց.
Յերկինս դարձի՛ր, տես անդ Աստուած մի ունիս,
Քեզ դատաւոր անաչառ,
Որ միոյն տեղ հատուցանէ բիւր չարիս,
Եւ կը տանջէ չարաչար.
Գիտցի՛ր որ, քո անմեղ որդւոցդ արտասուք
Եւ հառաչանք բոցածին
Պիտի թափին դլխիդ վրայ վրիժառուք
Իբրեւ կրակ Սոդոմին,
Թէ դեռ պատճառ բռնես պարտքեր՝ ու պէտքեր,
Եւ չդառնաս հայրենիք,
Ու չարբես նոցա արցունք մահաբեր,
Որ կը թափին յուսալիք։

ՀԱՌԱՋՆԻՔ ԸՆՏԱՆԵԱՅ ՊԱՆԴԽՏԻՆ

Արեւելեան դաշտի մը քով
Վեր բարձրացած երկու ժայռեր՝
Յերկինս հասած էին գլխով
Հին դարերու յիշատակներ.
Ու ժայր 'ի ժայր կամարաձեւ
Շուք կուտային ուղեւորին,
Ուրկէ ղեփիւռք մեղմ ու թեթեւ
Թոյլ թեւերով կուգան, կանցնին.
Անդ. հինաւուրց ծառի մը քով
Խրճիթ մը կայր մամռով պատած,
Եւ դոյն ղդոյն ծաղիկներով
Վայելչագեղ էր զարդարուած.
Գոմիկ մ'ալ կար նոյն խրճթին քով
Բոլորաձեւ ու լայնադիր,
Հիւսուած բարակ ուռիներով
Պարզ, այլ սակայն յոյժ սիրալիր.
Լուայ, հաւեր— կո՛ւթ կո՛ւթ—խօսին,
Գառնուկ մ'անդէն կընէ—ըմմէ՛—
Նշուկ զբայ կապուած ցցին,
Երինջն— ըմպօ՛—կով բառաչէ.
Անշո՛ւք խրճիթ, գոնակ մ'ունէր
Առանց նիգի, և կիսաբաց,
Ուրկէ ղեփիւռը անցած չէր,

Ոչ արեւուն լոյսն էր հասած .
Ո՞հ ի՞նչ կըլլայ սիրտ մ՚զգայուն ,
Երբոր տեսնէ զայն սուրբ պատկեր .
Միայնութիւն անմեղութիւն
Թշուառ կենաց սիրուն գարդեր .
Եւ անդ աչքերս յառած տեսի
Քով 'ի քով՝ ուս ուսի կքած
Ոտն ալեւոր այր ծերունի ,
Եւ ոտն կին՝ զաւուրբ անցած .
Մինն հայր էր , և միւս մայր ,
Բազմամենի լծակիցներ ,
Երկուքն ալ սուրբ սիրոյ տիպար ,
Եւ սուրբ ուխտի նահատակներ .
Հօրն ճակատ խորոշմած էր ,
Աչերն եղած երկու աղբիւր ,
Արցունքն յերեսն 'ի վայր հոսէր՝
Հետքեր թողլով դառնամրուր .
Հոսէր ընկճեալ գրկացը մէջ ,
Եւ ինքն յերկինս հայէր յուսով ,
Որ մարի հուր սրտին անշէջ՝
Հուրն այն կիզիչ որդեգորով ։
Միւսն ունէր սիրտ մայրական ,
Սիրտ անվահատ , և անվեհեր ,
Զի սիրտ մօր սիրտ է քաջութեան ,
Կը դիմադրէ բիւր վտանգներ .
Խեղճ կին . որ ձայնը սրտառուչ

Սպառած էր 'ի սէր զաւկին,
Հեծեծելով ցվերջին շունչ,
—Ողի՜ս—գոչէր կողկողադին.
Կըսէր—ո՜վ տէր, ես ալ քոյին
Մի արարածն եմ գերագոյն,
Ես ալ առատուն 'ւ երեկոյին
Գեղ ծունր տամ խոնարհագոյն.
Ես ալ՝ եթէ հայիմ յերկին,
Կուզեմ տեսնել զարեւդ վառ,
Զոր պարգեւես այս աշխարհին
Զոդի և կեանս տալ անդադար.
Ես ալ՝ երբոր 'ի դիշերին
Անքուն դիտեմ աստղերուդ շարք,
Ես ալ կուզեմ որ, յիս փայլին
Լուսնկայիդ անհատնում փառք.
Ես ալ կուզեմ նաիլ սեղան՝
Ողի թոռներ շուրջս 'ի շար,
Ծնգով լինել քեզ օրհնաբան,
Եւ զոհ ուտել հայն ու բանջար։
Այլ ես՝ աւա՜ղ, զուրկ ճնամ հոս՝
Զուրկ 'ի քոյին բարեաց անհուն,
Այր մ'եմ թշուառ, աչք ցոլահոս,
Ձենճերի սիրաս հրով սիրոյն.
Տեսնեմ, վառեա՛ն ընդ մօր թեւով
Պատսպարի ցրտէն, փոթէն,
Տեսնեմ թռչնակն իւր ձագերով.

Զուարթաձայն երգէ բունէն .
Տեսնեմ առիւծն կորիւնն առած ,
Ինտառ ու դաշտ կը դորձէ խաղ ,
Ետն վազվազէ ձագեր ժողված ,
Լոկ անդաւակ ես կամ, աւա՜ղ .
Մարդ եմ, բայց չեմ քան հաւ փոքրիկ,
Քան զթռչունն թեւապար ,
Չեմ քան զառիւծ , քան զշնիկ,
Այլ թշուառաց եմ մի թշուառ .
Որդի ծնայ սիրով սրտիս ,
Հազար յուսով մեծցուցի զայն ,
Որ ըլլայ ծեր ժամանակիս
Ինձ մխիթար , և օգնական .
Երբոր տասն տարի յառաջ
Եկաւ , ու զիս գրկեց ոյժով ,
Ձեռքս պագաւ լալահառաչ ,
Ու ողողեց ջերմ արցունքով ,
Ըսաւ « մայրի՛կ , կին ու զաւակ ,
Հայրս ու զքեզ թողում, կերթամ,
Որ շահաւոր ընեմ վաստակ ,
Քիչ ատենէն վերադառնամ .
Մի մոռնաք զիս , ես ալ զձեզ
Չեմ մոռանար իմ սիրելիք ,
Աղօթք ըրէք , որ իմ գործէս
Յաջողութիւն բերէ երկինք ։ »
Յայնժամ իմ սիրտս մայրական

Զդիմացաւ անոր լացին,
Ու փղձկեցայ ո՛հ նոյնժամայն,
Շուրթս դրի իւր երեսին,
Լացի, լացի, համբուրեցի,
Սրտիս եղաւ կատր կատր,
Գնա՛ որդեակ, գնա՛ ըսի,
Տէրն ըլլայ հետդ ամեն օր.
Գնա՛, բայց միշտ յիշէ որդեակ,
Թէ արեւու չունիմք մեք լոյս,
Սառանց քեզի մեզ չկայ կեանք,
Դու ես կենաց մեր բոլոր յոյս.
Ծերացած եմք հայրդ ու ես,
Թէ շուտ չգաս, և ուշանաս,
Մեզ հողով ծածկած գտնես,
Գուցէ զաւակ՝ կին չտեսնաս.
Սանկ երկար լացինք, ըսինք,
Ու վերջապէս բաժնուեցանք,
Հարսով թոռնով որբ մնացինք,
Սուգ զգեցանք, միայնացանք.
Անգութ զաւակ գնաց, մոռցաւ
Զիւր ուխտ, խօստումն, և իւր սէր,
Ալ աչքերուս արցունք չորցաւ,
Լոյսը չինչաւ խաւարաբեր։—
Խեղճուկ պառաւն այսպէս ողբաց,
Յետոյ դրաւ դլուխն հողին,
Զոր երբ տեսայ, բոց մը պոռտքաց

Կարծես սրտէս դուրս մահածին .
Հաղիւ հազ աչքս դարձուցի
Այլ չտեսնել զայն տեսարան ,
Յոր խսաիւ սիրտըս ճմլեցի
Յիշատակաւ մի տխրական.
Նոր տեսարան կրկին աչաց
Իմ երեւցաւ դառնահամբոյր ,
Զայն աղէքարշ պատկեր լալեաց
Ո՞վ էր դծեր այնչափ տխուր :

Երեւեցան անդ սիրադեղ
Երկու աղջիկ , ու մի տղեկ ,
Կարծես թ՝երէք հրեշտակ շքեղ
Յերկնից յերկիր էին նորեկ .
Երեքն մէկ , ու ձեռք ձեռքի
Դէպ հոս դէպ հոն կը վազվռտեն ,
Անմեղ տղայք , անդէտ բաղդի ,
Ծաղկունք ծաղկանց մէջ կը պարեն .
Յափշտակեալ 'ի նոյն պահուն .
Մինչ ակնապիշ և անյարիր
Կայի անշարժ այն նոր տեսոյն ,
Թէ ի՞նչ անմեղ , ու սիրալիր :

—Պետո՛ , Մարիա՛ , Է՛ Թուրվանտա՛ —
Նոյնժամայն ձայն մը լսուեցաւ ,
Ցուրվը պատող լերանց վրայ
Զայն կրկնեցաւ սրտաբրաւ .

Այն կողմ դարձայ, և ի՞նչ տեսնես.
Հոն դեռահաս կին մ'էր կայներ,
Նման նման կարմիր երես,
Յոնքեր լուսնի էին պատկեր.
Դաշտէն եկեր, խոնջ 'ի վաստակ,
Ու տնական պէտքն հոգացեր,
Ճամբէն թափէր այլ կայլակ,
Մայրն էր, որդիքը կը խնդրեր։
Գեղանի՛ կին, հասակն արի,
Կորով բազկին հպարտանայր,
Ներքեւ լաթին պատառոտի
Զխնամեալ անձն շողշողայր.
Կարծես դաշտայ դիցուհին էր,
Եւ կամ ծաղկանց չատուածուհին.
Իւր սիրաղեղ հրաշից աչեր
Զարդն Աստուծոյ դեղեցկագին.
Այլ թախծութիւն դիմաց վրան՝
Ինչպէս որ ամպ ծածկէ լուսին,
Այնպէս մթին կը ծանրանան,
Աքօղեալ տեսքն հրեշտակային։
Ո՛վ, քանի՛ խոր խոցի խակոյն
Մարդ, երբ տեսնէ այնպէս տանջած
Գեղեցկութիւն Անմեղութիւն
Վասն Սիրոյ. վասն Պարտեաց։
Պատմերկ է, խամրի հոլէ,
Արեւ կիրակու հիքին մարմին,

Սիրան կուրծքին տակ բաբախէ
Կարօտ սիրով իւր վեսային .
Խե՜ղճ կին հեռի իւր էրկանէն ,
Զաւակներուն կայ պահապան ,
Սէրն 'ի սրտէն , արցունքն աչքէն
Ի դուրս թափին մշտահոսան :

Յառաջ գնաց , և սիրական
Որդիս ժողովեց այն ծառին տակ ,
Եւ պատկեցուց խոտոց վրան ,
Ու սկսան անուշ քնակ .
Հէ՛ք մայր , յայնժամ ձեռքը ճակտին
Պահ մը կեցաւ յուղուած մտքով ,
Եւ կռթնած 'ի կող ժայռին ,
Զայս երգ ըսաւ լալով , ողբով .

—Ամառուն կեցնեմ կանուխ
Սրտիկս է 'ի Խաչ ,
Դիզուած են ամպեր թուխ
Աչքերուս առաջ .
Շուրջ կը հայիմ, չկայ
Ոչ իմ Սէր , ու Տէր ,
Օրըս կուգայ , կերթայ ,
Կ'սպասեմ անտէր .
Գացէ՛ք , ամպե՛ր գացէ՛ք ,
Ես ալ տեսնեմ լոյս ,
Անգամ մ'ալ ինձ բացէք
Արեւն իմ սիրոյս :

Արեւը կելնէ յայց
Դաշտին ու սարին,
Դեռ գլխիս չէ ծագած
Արեւն իմ եարին.
Գնա՛ արեւ, գնա՛
Դու չես իմ արեւ,
Արեւս իմ հեռի կայ
Թուխ ամպոց ներքեւ.
Ի զուր զայն հարցնեմ
Ծիծռան Կռնկան,
Ծեծեռնակն ու Կռունկ
Պատասխան չտան.
Գնա՛ Կռունկ 'ի տար,
Գնա Ծիծեռնակ
Եկող տարի ֆոպոր
Զառած մի դառնաք:

Հովիւ նստած է մօտ
Պաղուկ ջրակին,
Ջրակն է աւազոտ
Նման արծաթին.
Սրինդ իւր քաղցրաձայն
Կը փչէ հեշտիկ,
Սըրընդին պատասխան
Կը մայեն գառինք.
Գնա՛ սրինդ, գնա՛,
Մի՛ տար ինձի սէր,

Իմ սէրը գերեալ է,
Եւ ունիմ ընկեր։
Գարուն կուգայ, կանցնի,
Բայուին ծաղիկներ,
Դաշտ խոտով զարդարի,
Կարածին դառներ.
Գառնուկ մ'եմ մոլորած
Դաշտայ մէջ խոպան,
Ի Սաբիկայ ծառէն
Կախուած մի խոտան.
Գայէ՛ք դառներ գայէ՛ք,
Սրտիկս է 'ի խոց,
Զեղ քանի տեսնեմ,
Յիս կը լեցուի բոց։
Տուք տուէք մեզ սարեր,
Տուք տուէք ծառեր,
Զեր շքով քնանամ
Որդւոցս առ ընթեր.
Որ քունը մեզ բերէ
Զանուշ երազներ,
Զի անուշ երազով
Հեշտ կ'անցնին ժամեր.
Եւ կամ մահ բերէ մեզ,
Վերջ տայ մեր վշտաց,
Երեք որդիքս ու ես,
Հոս ենչիմք անդարձ.

Գայէ՛ք երազք , գայէ՛ք ,
Բա՛ւ դիս խաբեցի՛ք ,
Թշուառին քաղցր է մահ
Քան կեանք եղկելի՛ք : —

Այսպէս երգեց , լայաւ խեղճ կին ,
Թռչունք կային հանդիսաւոր ,
Մեղմիկ զեփիւռք զկայ առին ,
Հոգիք երկնից լսին 'ի տեսս .
Խորոց լերանց ու ձորոց մէջ
Յոյժ ցաւագին կրկնեց այս բան ,
Լսող սրտերն 'ի խոր խոցեց
Թշուառ կնոջն աղեբէկ ձայն .
Օրն ողջունէր մուտն երեկոյն ,
Արեւն հասաւ ներքեւ ծառին ,
Մի թռչուն ամպիկ եկաւ խակոյն,
Շուք տարածեց նոցա դէմքին :

Յայնժամ գնաց որդւոց քով մայրն՝
Սիրադորով , և խանդակաթ ,
Քառեակ հրեշտակ խառն ընդ իրեար
Փաթաւեցան , ննջեն հանդարտ :

Տղայքն խանջ զբօսանքէն ,
Բայց միտք ու սիրտ են խաղաղիկ ,
Դեռ յերազի խաղան , վազեն ,
Բռնել ծաղկանց մէջ թիթեռնիկ .
Սակայն հէք մօրն վշտակիր
Թախիծ պատէ միտքն ու հոգի ,

Լայն կրծոց տակը բոցալիր
Հազար ցաւոց հուր բորբոքի .
Եւ կ'երազէ , ի՞նչ երազ չար .
Կը քամնին ոսկերք հիքին ,
Թէ իւր վրան կատաղաբար
Ասւազակներ կը յարձակին .
Ասւազակնե՛ր . մահն անտէրին .
Վրայ հանին բրով սրով,
Անգութ՝ ահեղ նման վադրին
Աչքերնին լի է արիւնով.
Սոսկմամբ տեսնէ հէքն անդանօր,
Որ զիւր որդիս վարեցին քարշ ,
« Մի՛ . . ա՛հ . » ըրին կատր կատր ,
Եւ արձակեց ճիչ ազեքարշ .
Ճիչն ընու զերկիր . զեթեր ,
Ծովն ու ցամաք դողան, սարսին,
Եւ կը շարժէ 'ի դուրթ ժայռեր
Մայրական ճիչը սրտադին .
Ձչեց , բաւ նա շնչասպառ ,
Եւ դալկացաւ որպէս դիակ ,
Վա՛հ քեզ հազար , վա՛հ դժբաղդ մայր,
Որ զոհ կերթաս սիրոյդ միակ .
Ասյապէս Մորֆէ խաղ կը խաղայր
Անմեղ սրտից հետ լուսային ,
Լուսին դէպ յայգն սրտավար
Հսկէր նոցա բբաց վրան .

Երկինք վերմակ, խոան անկողին,
Հովին օր օր կարդայր հիքայ,
Որոց դժբաղդ խոնջեալ դլխին
Հայրենի հողն էր կակուղ բարձ.
Պառկած՝ երկար քաշէին քուն,
Քուն էր յայնժամ էակ համայն,
Եւ վարէին աստեղք անքուն
զԵրաղոց ժամն միայնութեան.
Լուսնի լուսով դաշտն ու ձորակ
Անտառ ու ծովն էր լուսաւոր,
Թաւաբ ամպեր կային համակ
Խրճթին վրայ այն սդաւոր.
Լուսնակն եկաւ, պահ մ՚կեցաւ անդ,
Կարծեմ աչեր լային ցողօտ,
Լայ ո՛վ լուսին, լայ, մանաւանդ
Լալեայ արժան թշուառ կայ հոտ,
Լա՛յ, զի չունին դուքա լայող,
Թշուառին լայն է մխիթար,
Դոյա անուանդն է աչայ ցող,
Թափէ՛ պաղուկ ցողդ անդադար.
Եւ ննջեցէ՛ք մայր ու որդիք,
Զեր այդ նինջ քաղցր է քան զմահ,
Զի թէ զարթնուք, այդուն չարիք
Զեզ կը բերեն նորանոր ահ։
Զեր կեանքը նինջն է, ննջեցէ՛ք
Թշուա՛ռք, չունիք ոչ հայր, ոչ այր,
Ոչ օրուան լոյս, ոչ սրտի երգ,

Ձեր չարեաց հայրն է ձեր պատճառ.
Զունի՛ք լուծել վրէժ չարեաց,
Վա՜հ, ձեր վրէժ ձեր ողբն ու սուգ.
Բայց վրէժխնդիր ինքն է Աստուած
Ցորչափ թափին ձեր արտասուք։

ՎԵՐՋԻՆ ՀԱՌԱՋԱՆՔ ԵՒ ՄԱՀ
ԾԵՐՈՒՆԻ ՄՕՐ ՏԱՍՆԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏԻՆ

Տխո՛ւր ժամեր, սխո՛ւր դիշեր, ամենքն ըրին լուրենց շրջան,
Արեւն յերկիր կեդրոնացաւ, հարս ու թոռնեւրըս չերեւցան.
Միրոյ ղոհե՛ր, չորսն ալ մէկտեղ դեռ անօթի ենչեն վահատ,
Սէր չո՛ւնի կեանք, սէր կը դերէ, և բնաւին սէր չէ աղատ՝
Աչեր ցօղօտ, սիրտ արիւնոտ, հանդչին յուսոտ մարդակարոտ,
Ա՛հ թէ, մէկ մ՚ալ ինձ ըսէին—մա՛միկ, բարի՛ քեզ առաւոտ. —
Ալ վահ չեն քուն, ահա մահուան դարշաբոյր ձեռք՝ պատէ զանոնք,
Ա՜հա՛ մայրեաց շշնչաձայն, և վտակին լոին լանք.

Ահա՛ ալբիւրն, որ տայր այդուն այդուն նոցա
պաղուկ ջրիկ,
Եւ այն ալբիւր եղերաւոր յօրինէ ոլբրս ագա-
ռիկ.
Այլ ո՞ւմ ես ասա կամ, և ինամ, արժանի եմ
և ես հոգին. —
Ասաց ծերուկն, ու դալկացաւ, դողաց, 'ւ ան-
շունչ ինկաւ գետին.
Ամլիկ մ'եկաւ, զայն ալ ծածկեց, ամպն արե-
ւուն է գերեզման,
Ուր վեցիւրին արեւ մարեց ահեղ ոճիր պանդըխ-
տութեան։

ՎՇՏԱԿՐՈՒԹԻՒՆ

ԱՅՑԵԼՈՒ ԳԻՒՂԱՑԻՈՑ Ի ԽՐՃԻԹ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԸՆՏԱՆԵԱՑ ՏԱՍՆԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏԻՆ

Մթնշաղ էր, նոր վարդ ամպիկ
Բանայր դռնակն առաւօտուն,
Քանի մը հարս, քանի մ'աղջիկ
Յայց կերթային պանդխտին տուն.
Ճանապարհին զոյգ զոյգ վիմեանց
Հետ խօսէին սիրոյ վերայ,
«Սէր» կըսէին «լոյսն է կեանց,
«Մեռած է մարդ թէ սէր չըլայ։

« Սա պանդխտին կինն ու որդիք
« Կարօտ՝ անտէր կան միայնակ ,
« Եւ իւր ծերուկ հայրն ու մայրիկ
« Քամեն սիրոյն դառն բաժակ ։

« Ա՛հ , որչափ որ դացինք , տեսանք ,
« Երբեմն զինք , երբեմն որդիք ,
« Հիւանդ՝ անտէր , անօգնականք ,
« Տառապէին միշտ յուսալիք ։
« Քուրո՛ւկ այս ի՞նչ յաւ է այսպէս »
Կըսէր մէկ հարսը միւսին ,
« Այս ի՞նչ վճիռ է դառնապէս
« Հայ հարսներուս դրսեաց ճակտին ։

« Տես , սա պանդուխտ Թորիկ աղբար
« Տան տարի կայ , որ դնայ ,
« Սակայն զիւր տուն մօրցաւ խապտռ ,
« Մօրցաւ և պարտքը ընտանեաց ։
« Երկաթէ՛ սիրտ , անդո՛ւթ ոգի .

« Զունի պատիւ , չունի ամօթ ,
« Եւ Աստուծմէ ալ չերկնչի ,
« Որ չյիշեց զորդիս կարօտ ։ »
Ուրիշ մ՚անդէն խօսքն ընդմիջած ,
Ըսաւ « հարսներ՝ ու աղջիկներ
« Ինձ լսեցէ՛ք , դուշակ չարեաց
« Տեսայ երազ մը այս գիշեր .
« Տեսայ զԹուշան հետ զաւակաց
« Մի դաշտի մէջ կանաչագեղ ,

« Զիւնի նման լաթեր հագած ,
« Ինչպէս հրեշտակ էին շքեղ ։
« Գլուխն ունէր ոսկեղէն թագ ,
« Ճակտին վրայ լուսին մը կար ,
« Որդւոյն երես շարուած կարգ կարգ
« Կը փայլէին աստղեր հաղար ։
« Հովիտ մը կար անոնց մօտիկ ,
« Կարծեմ աշնան էր եղանակ ,
« Բայց երփներանգ բոյս ու ծաղիկ
« Կը բուրէին հոտ անուշակ ։
« Ի՞նչ դեղեցիկ էր տեսարան ,
« Երբոր աչքս դիպան անդէն
« Ծեր Մարիամն , Թորիկ պապն
« Նստած ուրախ երգեր կ'երգեն ։
« Անկէ հեռի լերան մը տակ
« Այր մ'ալ տեսայ շատ լայն ու խոր ,
« Ուր կերեւէր ծով մ'անյատակ
« Սեւափրփուր , և ահաւոր ։
« Շոշափելի խաւար կար անդ ,
« Տեսիլքն յոյժ էր սոսկալի ,
« Ուր սեւ սեւ նաւ , ու սեւ սեւ մարդ
« Այլեկոծեալ կը տանջուի ։
« Բայց մէկ մը կար , որ բերնէն հուր
« Ու դլխէն մուխ 'ի դուրս կ'ելնէր ,
« Հեծեծաձայն , 'ւ ապեկատուր
« Կոծէր , կողբայր , մեղայ գոչէր ։

« Այլէն ճախէն կար երկու ծեր ,
« Մին քան զմիւս վրէժխնդիր ,
« Հալած կապար ձեռք են առեր
« Թափեն 'ի գլուխն սեւակիր ։
« Երեք մանկիկ , ու կին մ'ալ կար
« Սուր 'ի ձեռին տային հարուած ,
« Մէկ վայրկենի հարուածն հազար
« Կրել իսկ չէր գործ աշխարհաց ։
« Ո՜հ , ի՞նչ վրէժ էր անողոք
« Սպառնալից և ահռելի ,
« Սրտոտ՝ հառաչք՝ գոչիւնք՝ լալոնք
« Կը մնային անլսելի ։
« Բայց երբ տեսայ , որ Շուշանին
« Էրիկն էր այն բազմաչարչար ,
« Զդիմացայ ողբոց ձայնին ,
« Եւ արթնցայ սարսափահար ։
Սմենքն ըսին « բարի՛ն ըլլայ . »
Ու քայլ առ քայլ յառաջ գացին ,
Բայց ամենուն սիրտ կը դողայ ,
Թէ կա՞յ ինչ չար հէք պանդխտին ։
« Ո՜հ շուտ ըրէք , արի՛ք , երթամք »
Ըսաւ ուրիշ մը ընկերին ,
« Եւ Շուշանիկ տեսնեմք , դառնամք ,
« Ու Շուշանամք երեկոյին ։ »
Սյսպէս հազիւ մօտ գացին տան ,
Եւ յանուանէ կը կանչէին ,

Բայց մնացին անպատասխան,
Ու հայէին այսդին այնդին։
«Ո՞ւր է Շուշան» մէկը գոչեց,
«Թոշնեալ Շուշան զարդը հովին,
«Ո՞ւր են որդիք» միւս կրկնեց
«Խամրած ծաղկունք գեղեցկադին։
Եւ ոմն յարեց «ո՞ւր մամերնին՝
«Բարի պառաւն այն Մարիամ,
«Եւ մեր ծերուկ Թորոս էտին
«Ո՜հ, չեմ տեսներ, որ կողմ դառնամ։
«Զարմա՛նք» ըսին, և շուարած
Աչք ածեցին վայր ամենայն,
Զգիտեմ, ինչ դիպաւ աչաց,
Կեցան, մնացին, ու պաղեցան։
«Ի՞նչ կը տեսնեմ, ա՜հ, ի՞նչ է այն»
Ըսաւ Նարկիզն Ըռեհանին,
Նունուֆարին հարցուց Օղտան,
«Այս ի՞նչ պատկեր է ցաւագին։»
Եւ սոսկալով ամէն մէկ անձ,
Ու ահաբեկ եւ խրտչեցան,
Եւ Բակուեցաւ հիւրերուն լաց,
Ու ճչեցին անդ ողբաձայն,
«Աւա՛ղ, հաղար աւա՛ղ» ըսին,
«Աւա՛ղ, ամենքն ալ են մեռած,
«Ահա ասա անդ փռուած գետին,
«Անգթութեան զոհ են եղած։

« Ա՜հ, քանի՜ մէկ վտանգ, հարուած
« Անօթութիւն անտանելի,
« Այնչափ չարեաց, անչափ վշտաց
« Ըսէ՛ք քո՛յրեր, կը դիմացուի՞ ։
« Որչափ ցաւոց մէջ իյնայ մարդ,
« Նոյնչափ և մահ կը մօտենայ,
« Մահ թշուառին կեանք է հանդարտ,
« Մահուամբ արցունք կը վերջանայ ։
« Տեսէ՛ք Շուշան զորդիս դրկէր,
« Զորսն ալ մեկտեղ մեռած են, ա՜հ,
« Զորսին վրայ կը սգայ Սէր,
« Վա՜խ Շուշանիկ, վախ ձեզի վա՜խ ։
« Կեանքդ լալով հոգին տուիր,
« Ա՜խ Շուշանիկ, խեղճ Շուշանիկ,
« Առած ննջես դու սիրալիր
« Թուրվանդ՝ Աննադ ու քո Պետիկ,
« Դաշտի երեք այդ սուրբ ծաղիկ ։ »
« Ծնար, մեծցար, օր չտեսար,
« Ու քո բաժին քո վիշտն եղաւ,
« Կէնճ արեւուդ չկշտացար,
« Սեւով սգով կեանքդ անցաւ,
« Ամեն ցաւոյդ ահա՛ վրոխան
« Աք մ'հոգ առիր, ու պառկեցար,
« Ամեն յուսոյդ տխուր վախճան
« Խաչ մը առիր, ու քնացար ։ »
Այսպէս լացին, ու սեւ հոգին

Տակ ծածկեցին զանոնք մի մի,
« Սրքայութիւն դնաց » ասին
« Այս թշվառաց անմեղ հոգի։ »
« Իրենց հոգւոյն բի՛ւր երանի։ »

Ու ժողվեցան բարեպաշտոնք,
Խաչ հանեցին, հոգ կնքեցին,
Լալով 'ի ծունր ըրին աղօթք,
Եւ սուգ 'ի սիրտ դարձան, դացին։

Զայս չար խոպոչ տարին քաղաք,
Շնկոյով լեցաւ չորս դին,
Ամեն կողմէ տեղայր լուտանք,
Ամեն բերան կ'անիծէին.
Պանդխտութիւն կանիծէին,
Եւ այն անէծք որպէս կայծակ
Կարծես խրէր 'ի կոզ շիրմին
Հէք պանդխտին սայրասլաք։

ԳԵՐԵԶՄԱՆ

ՏԱՄԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏԻՆ ՅՕՏԱՐՈՒԹԵԱՆ

Վառ վառ արե՛ւ, շողշող լուսին
Իմ վրայէս ոչչափ անցնիք,
Ասէք ո՛Հ իմ կարօտ սրտին,
Ու հեռ տարէք յիմն հայրենիք,
Հոն երկու մեծ ժայռերու տակ
Վեց հատ շիրիմ կայ ղեռեղուած,
Կարօտս հոն թողէք մինակ,
Հոն են աճիւնք իմ սիրելեաց,
Մէկ շիրիմէ միւս շիրիմ
Գոնէ ըղձից մեր հանի ձայն,
Մինչեւ յերկինս տեսնուիմ,
Եւ կարօտներս հոն վերջանան։

ԵՒՐԻՄ

ԲԱԶՄԱԶԱՐԶԱՐ ԿՆՈՋՆ ՏԱՍՆԱՄԵԱՑ

ՊԱՆԴԽՏԻՆ

Այս պաղ քարէն 'ի վեր երկար
Որոց բարձրանայ ամեն առւօտ,
Այս պաղ քարէն դէպի 'ի վայր
Արցունք վազէ յորդ ու ջեռօտ.
Մին վեսին Սէրն է արբազան,
Որոց տայ հրով կարօտանաց,
Միւսին Գուրթն է մայրական,
Որ 'ի շիրմէս չերթայ 'ի բաց.
Եւ Սէր ու Գուրթ հոս զօրանան
Արդարութեան ընել տրտունջ,
Մինչեւ Տիրոջն 'ի դատաստան
Հանի բողոք շիրմիս անշունչ։

ՔՆԱՐԱՆ

ԵՐԻՑ ՈՐԴԵԿԱՑ ՏԱՍՆԱՄԵԱՑ ՊԱՆԴԽՏԻՆ ՈՐՔ ՑԵՏ ԱՆՀՆԱՐԻՆ ՏԱՌԱՊԱՆԱՑ ԿԱՐՕՏ ԵՒ ՍԳԱԿԻՐ ԻՋԻՆ Ի ՀՈՂ

Երկու քոյր էինք , ու մէկ ալ եղբայր ,
Ծնանք , ու մեռանք , բայց չտեսանք հայր .
Չտեսանք հանդէս , չտեսանք այլ մարդ ,
Ոչ բնաւ հաճոյք , և ոչ օր ղուարթ .
Հեռի՛ մարդոցմէ , աշխարհէ հեռի՛ ,
Բոյս մ՚էինք կարծես դաշտի անտառի .
Ի գարնան բուսանք , չորցանք աշնան մէջ ,
Այս եղաւ կենաց մեր սկիզբն ու վերջ .
Այլ դուք որ ասկէ անցնիք , հանդիպիք ,
Ու տեսնեք երեք այս թոշնած ծաղիկ ,
Զոհեր պանդխտին , որ մատղաշ հասակ
Ողբով ծածկեցին այս սեւ հողին տակ .
Երեքիս վրայ արտասուաց երեք
Ջերմ կաթիլ թափէ՛ք , ու ապա անցէ՛ք .
Զի քան զայս աւել՝ , չկայ քաղցրիկ բան
Անոնց , որք ցաւօք դ.երեզման կ՚ինչան ։

ՄԱՀԱՐՁԱՆ

ԾԵՐՈՒՆԻ ՀՕՐ ՏԱՄՆԱՄԵԱՑ ՊԱՆԴԽՏԻՆ

Երկու դռնակ ունի աշխարհ ,
Մէկէն մտայ , ելիս տանչեցին ,
Սպասեցի զո՛ւր ընդ երկար ,
Բայց արեւու լոյս չցուցին .
Աչքս 'ի ցօղ , ոտք դոզ 'ի դոզ
Միւս դռնէն 'ի դուրս ելայ ,
Օրհնեա՛լ դռնակ , օրհնեա՛լ և հող ,
Հանդարտութիւնս այն տեղ դտայ :

ԱՂՕԹՔ ՅԵԼՍ ԱՐՇԱԼՈՒՍՈՑՆ

Նոր արշալոյս մեզ տուեր Տէ՛ր,
Ահա բացուի վերայ դլխիս,
Եւ նորոգի այս տիեզեր.
Լոյս բերելով մթնած աչքիս.
Ո՛վ Տէր խնդրեմ, բա՛ց և հոգւոյս
Քաղցրիկ սիրոյդ քո արշալոյս։

Առաւօտուն կարմիր դռներ
Քո գահոյից տակէն բացուած,
Աշխարհ բերեն օր կենսաբեր,
Շնորհ անհուն քո բարութեանց.
Ո՛վ Տէր խնդրեմ, բաց մեզ կարօտ
Ողորմութեան քո առաւօտ։

Օրհնեալ ես Տէր մեր բարերար,
Օրհնէ զքեզ երկիր բոլոր,
Թէ ծաղեցեր զարեւդ վառ
Արարածոց քո քիւրաւոր.
Ով Տէր խնդրեմ, ծաղէ մեզ յար
Զարեւ դթոյդ քո կենարար։

ՓՈՒՆՋ ՄԻ ԱՐՏԱՍՈՒԱՑ

Բոլորեալ 'ի շիրիմ քաղցրայիշատակ ԹՈՐՈՍ
պէյի Ց. Ազնաւուրեան սիրեցեալ բարեկամիս :

Կանաչ տարիք՝ սիրտ գեղեցիկ՝ վառվռուն միտք,
Բարք սիրելիք օժիտ տուած էր քեզ երկինք.
Ճարտարապետ՝ արհեստն 'ի քո ճակատդ վառ
Ներկային Սէր, 'և ապագային մեծ յոյս կուտար.

Այսպէս արեւ մ'էիր բացուած լուսապսակ,
Այլ մե՛ղք հազար, ծածկեցար սև ամպերու տակ,
Այդ վեհ ձրից զի՞նչ մեզ թողեր ազնի՛ւ Թորոս.
—Լոկ յիշատակ, յոր խաղան աչք մեր ցօղահոս : —



ՔԱՂՑՐԻԿ ՆՆՋԱՐԱՆ

ԴԵՌԱԲՈՂԲՈՋՆ ԱՏՈՄԻ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՈՐԴԻՈՅ

ՎԵՄ· ՄԻՔԱՅԷԼ ԷՖԷՆՏԻԻ

ՄԱՄԻԿՈՆԵՆ

Սերո՛վբ, զի՞ կաս աստանօր
Հրեղէն սուր 'ի ձեռին.
—Մամիկոնեան սիրաւոր
զԱտոմ պահեմ սխրագին։ —

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԱԼ ՏԱՊԱՆԱԳԻՐ

Վերջին տնակ յաւիտենական, յորում անվրդով ամփոփի սիրտ եւ ոգի Սիմոն Հ. Մ. Ֆելէկեանի։

Ա.սա վերջացաւ սրտիս ձայն
Ի քնարիս բեկբեկ թել,
Թողեալ զաշխարհ ամենայն,
Գնաց զերկինքս երգել.

Ա.յլ զայս վերջին եթող քան
Ի յիշատակ անմոռաց,
« Թէ կեանք ծնողն է մահուան,
« Թէ մահ ծնողն է կենաց։ »

457434

ԳՐԵԼՆ ու ԿԱՐԴԱԼ

ընկերական աղգի յատկանիշն է

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر